

Քրիստոնեական այսպիսի

ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱՇՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՂԱՐԱՆՈՒՄ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

1 փետրվարի

ՀՀ-ում Ֆինլանդիայի դեսպանին



Ֆինլանդիայի Ուղղափառ եւ Լյութերական Եկեղեցիների պատվիրակությունների բերած մասնակցությունը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձավ նաեւ 2004 թվականին Ֆինլանդիա կատարած իր այցին, հանդիպումներին Եկեղեցիների առաջնորդների եւ փոքրաթիվ հայ համայնքի ներկայացուցիչների հետ:

Դեսպան Արյա Մակոնեն իր հերթին նշեց, որ իր համար մեծագույն պատիվ է գտնվել Մայր Աթոռում ու հանդիպել Հայոց Հովվապետին: Նա վստահություն հայտնեց, որ հնարավոր ամենը կանի, որպեսզի բարեկամական կապերն էլ ավելի զորանան, եւ Հայաստանն ու Ֆինլանդիան փոխա-

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Ֆինլանդիայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Արյա Իսկերի Մակոնենին (սատավայրը՝ Հելսինկի):

Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց երկու երկրների միջեւ դիվանագիտական հարաբերությունների եւ տարբեր ոլորտներում գործակցության զարգացման կապակցությամբ՝ ընդգծելով, որ այդ բարեկամական հարաբերությունների արտահայտությունն են նաեւ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու եւ Ֆինլանդիայի Եկեղեցիների միջեւ առկա եղբայրական կապերը:

Այս առիթով Վեհափառ Հայրապետը երախտագիտությամբ վերհիշեց 2015 թվականին Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի արարողություններին

դարձաբար ավելի ճանաչելի դառնան միմյանց համար:

Չրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը պատասխանեց դեսպանի հարցերին, որոնք վերաբերում էին Հայ Եկեղեցու առաքելությանը, սոցիալական ու կրթական գործունեությանը, ինչպես նաեւ հայ ժողովրդի առջեւ ծառայած ժամանակակից մարտահրավերներին ու դրանց հաղթահարման հրամայականներին:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը Նորանշանակ դեսպանին հաջողություններ մաղթեց դիվանագիտական իր առաքելության մեջ:

Հանդիպմանը ներկա էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի արտաքին հարաբերությունների եւ արարողակարգի բաժնի տնօրեն Նաթան արք. Հովհաննիսյանը եւ Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Շահե ծ. վրդ. Անանյանը:

8 փետրվարի

ՀՀ վարչապետին

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետության վարչապետ Կարեն Կարապետյանին:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ողջունելով ՀՀ վարչապետի այցը Մայր Աթոռ, կարեւորեց հայրենիքի առջեւ ծառայած մարտահրավերների հաղթահարմանն ու ժողովրդին հուզող խնդիրների կարգավորմանն ուղղված ՀՀ կառավարության ջանքերը եւ իրականացվող ծրագրերը: Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ արձանագրեց նաեւ, որ պրն Կարեն Կարապետյանն իր ծառայության տարբեր հանգամանքներում մշտապես աջակից է եղել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցուն եւ նրա կառույցներին:

Իր հերթին ՀՀ վարչապետը գոհունակությամբ անդրադարձավ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու եւ ՀՀ կառավարության միջեւ առկա հարաբերություններին՝ մեծապես կարեւորելով պետություն-Եկեղեցի համագործակցությունը:

Չրույցի ընթացքում Նորին Սրբությունը կառավարության ղեկավարին ներկայացրեց Մայր Աթոռ Ս. Էջ-



միածնի գործունեությունը: Խոսվեց նաեւ երկրում իրականացվող բարեփոխումների ընթացքի մասին:

Ամենայն Հայոց Հայրապետը ՀՀ վարչապետին մաղթեց, որ հաջողություններով պսակվեն հայրենիքի առաջընթացին եւ ժողովրդի բարօրությանն ուղղված նախաձեռնությունները:

Ս. Պատարագ եւ հայրապետական սրբատառ կոնդակ՝ Հայոց բանակի 25-րդ տարեդարձի առիթով

Հունվարի 29-ին, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Հայոց բանակի 25-րդ տարեդարձի առիթով Մայր Աթոռ Ս. Էջմիածնում մատուցվեց Պատարագ: Պատարագին էր ՀՀ ՉՈՒ հոգեւոր առաջնորդ Վրթանես եպս Աբրահամյանը:

Արարողությանը ներկա էին Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար Վիգեն Սարգսյանը, ՀՀ ՉՈՒ ԳՇ պետ, գեներալ-լեյտենանտ Մովսես Հակոբյանը, ՀՀ ՉՈՒ բարձրագույն սպայակազմը, Մայր Աթոռի միաբաններ, թեմակալ առաջնորդներ, ՀՀ ՉՈՒ հոգեւոր առաջնորդության սպասավորներ, զինվորներ եւ բազում ուխտավոր հայորդիներ:

Պատարագի արարողությունից առաջ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ՀՀ պաշտպանության նախարարին եւ ՀՀ ՉՈՒ ԳՇ պետին՝ ի դեմս նրանց շնորհավորելով հրամանատարներին ու զինվորներին:

Այնուհետեւ եկեղեցական թափորով Վեհափառ Հայրապետը եւ նախարարն առաջնորդվեցին Մայր տաճար: Թափորի առջեւից գնդերեցնե-



րը կրում էին Հայոց բանակի՝ պահապան հռչակված Աշոտ Երկաթի խաչի կրկնօրինակ մասուկապիր խաչը եւ ՀՀ ՉՈՒ հոգեւոր առաջնորդության դրոշմը:

Ս. Պատարագի ընթացքում հրապարակվեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբատառ կոնդակը՝ նվիրված Հայոց բանակի 25-ամյա հոբելյանին: Կոնդակն ընթերցեց Վրթանես եպս Աբրահամյանը:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՄԻ ԶՐԻՍՏՈՍԻ,
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲԸ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՍՕՔԸ ԱԶԳԻՍ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ,
ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԶԱՄԱԶԳԱԿԱՆ ԱՆԱՄԵՏԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՅ ՍՐԱՌՅ ԿԱԹՈՂԻԿԵ ԷԶՄԻԱՇՆԻ

ԶՐԻՍՏՈՍԱՄԵՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՁՈՅ ԵՒ ՕՐՆՈՒԹԻՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵՇԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐԵՈՒԹԵԱՆՑ ՀԱՅՈՑ

ՍՐԱՌՅ ԵՐՈՒՄԱՐԻՄԱՅ ԵՒ ԿՈՍՏԱՆՆՈՊՈԼՈՍՈՅ,
ԱՐԵՇՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ԿԱՐՂԱՊԵՏԱՑ, ԶԱՅԱՄԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳԱՑ,

ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՄՈՓՈՒԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՄԱՅՆԶԵՍԻՆ ԽՈՐՀՐԴՈՑ ԵՒ ՊԱՇՏՕՆԵԻՑ ԵՒ ՍԻՐԵՅԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՄԱՍՅԵԱԼ ԺՈՂՈՎՐԵԱՆ ՀԱՅՈՑ

«Տեր գորութիւն ժողովրդեան Իւրոյ տաքէ եւ օրինեցէ զժողովուրդ Իւր ի խաղաղութիւն» (Սղմ. 28.11):

Գոհություն եւ փառք ենք վերառաքում առ Բարերարն Աստված, որ խաղաղության մեջ ենք տոնում Հայոց բանակի 25-րդ տարեդարձը: Հայրապետական այս կոնդակով օրհնության եւ շնորհավորանքի Մեր խոսքն ենք ուղղում մեր հաղթական բանակի քաջասիրտ սպաներին ու զինվորներին եւ համայն մեր ժողովրդին:

Ս. Պատարագ եւ հայրապետական սրբատառ կոնդակ՝ Հայոց բանակի 25-րդ տարեդարձի առիթով



Սկիզբը՝ էջ 1

Անկախ մեր պետականության փառապանծ զավակն է Հայոց բանակը, որ կազմավորվեց մեր հայրենիքի համար ծանր ու դժնդակ օրերին: Մեր ժողովուրդը դիմակայում էր հարձակումներին Հայաստանի սահմաններում եւ Արցախում պաշտպանում ազատ ապրելու իր իրավունքը: Պատերազմի, շրջափակման, տնտեսական փլուզումների, գաղթականության, ավերածությունների, կուտակված ահռելի դժվարությունների պայմաններում մեր ժողովուրդը չդադարեց հավատալ, որ, ինչպես սողմսերգուն է ասում, «Տերն էր ժողովրդին զորություն պիտի տա եւ իր ժողովրդին պիտի օրհնի խաղաղություն պարգեւելով»: Խաղաղ ու ապահով ապրելու ձգտումով ազգիս զավակները, ապավինած Աստծուն, ելան պաշտպանելու մեր նվիրական հայրենիքը եւ մեր հայրերի ստեղծած ժառանգությունը: Հայրենասեր սրտերի բոցից մեր բանակը ծնունդ առավ ինչպես օր առ օր մեծացող Սասունցի Դավիթ, ամրապնդվեց ու զորացավ մարտերում՝ իր հաղթանակներով զորացնելով նաեւ խաղաղ կյանքի հույսն ու լավատեսությունը մեր ժողովրդի:

արցախահայության ազատ ապրելու իրավունքը:

Աղոթքով եւս հիշում Մեր զավակներին, ովքեր նահատակության պատկան ընդունեցին՝ հանուն մեր ժողովրդի խաղաղ կյանքի ու լուսավոր ապագայի: Նրանց անմահ անունները միշտ պիտի ապրեն մեր ժողովրդի հոգում՝ մեր պատմության խնկելի հերոսների շարքում, ովքեր իրենց անկեղծ հայրենասիրությունն ու ազգասիրությունը վկայել են իրենց կյանքով ու գործերով:

Այս հիշարժան օրը հայրական Մեր ջերմ սերը, գնահատանքն ու օրհնությունն ենք բերում մեր փառապանծ բանակի զորականներին, որ մշտադառն ծառայությամբ ապահովում են անդորրությունը մեր երկրի: Մեր գնահատանքն ու օրհնությունն ենք բերում բանակի կայացման գործում իրենց ավանդի ունեցող բոլոր երախտավորներին, այսօր բանակի զորացմանն աջակցողներին եւ բանակում ծառայող հոգեւոր սպասավորներին, ովքեր իրենց արժանավոր նպաստն են բերում մեր զավակների հավատավոր, պայծառ ու արի նկարագրի կերտմանը:

Հայոց բանակի սիրելի՛ փառապանծ զորավարներ ու զինվորներ, դուք քաջ գիտեք, որ բանակն ուժեղ է ոչ միայն զենք ու զինատեսակներով, այլ նաեւ՝ ոգով ու պատրաստվածությամբ: Ձեր սերը հայրենիքի հանդեպ, ծառայության մեջ ձեր նախանձախնդրությունը, միմյանց հանդեպ ազնիվ վերաբերմունքն ու հոգածությունը, ձեր հոգին զորացնող հավատքն ու հույսը նույնպես ձեր զենքերն են: Մաղթում ենք, որ մեր բանակը միշտ լինի հայրենասիրության դարբնոց, անկուն պաշտպանը մեր ժողովրդի արդար իրավունքների ու ամեն առաքինության օրհնակ, եւ մեր կյանքում միշտ ամուր լինեն հույսն ու քաջալերությունը եւ հավատքը աներկբա, որ «Տերն էր ժողովրդին զորություն պիտի տա եւ իր ժողովրդին պիտի օրհնի խաղաղություն պարգեւելով»: Աղոթք ենք վերառաքում, որ Աստծո Սուրբ Աջը հովանի եւ պա-

հապան լինի ձեզ եւ պարգեւի ապահով ծառայություն հայրենյաց խաղաղ եզերքներում: Թող ձեր հավատքը՝ որպես վահան ամրության, ձեզ պաշտպանի փորձություններից ու նեղություններից եւ Աստծո շնորհներն առատացնի ձեր կյանքում:

Թող Բարձրյալն Աստված առատապես օրհնի մեր երկիրը, խաղաղություն ու զորություն պարգեւի համայն մեր ժողովրդին՝ կառուցելու շեն ու բարգավաճ մեր հայրենիքը եւ իրագործելու ազգային մեր իղծերը:

Շնորհք, սեր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. ամեն:

Օրհնությամբ՝
ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տոսաւ Կոնդակս ի 28-ն Յունուարի յամի Տեառն 2017 եւ ի թուին հայոց ՌՆԿԶ ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի ընդ համարաւ 999

Կոնդակի ընթերցումից հետո, հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, կատարվեց Հանրապետական մաղթանք, որի ժամանակ առ Աստված միանական աղոթք բարձրացվեց հայրենիքի բարօրության, Հայոց քաջարի բանակի անսասանու-



թյան եւ հայրենյաց սահմանների անառիկության համար:

Ապա Գեորգյան հոգեւոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն, որի ժամանակ կատարվեց նաեւ պարգեւաբաշխություն:

Ի գնահատություն հայրենիքին մատուցած ծառայությունների՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Կրթանես եպս Աբրահամյանի միջնորդությամբ, Հայ Եկեղեցու «Սուրբ Ներսես Շնորհալի» պատվո բարձր շքանշանի արժանացրեց մի շարք զինվորականների:

Հայրապետական սրբատառ կոնդակն ընթերցեց Մայր Աթոռի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան եպս Նավասարդյանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը կոնդակի ընթերցումից հետո «Սուրբ Ներսես Շնորհալի» շքանշան հանձնեց ՀՀ ՊՆ ԳԾ պետի աշխատակազմի ղեկավար, գեներալ-մայոր Արիս Բրուտյանին, ՊԲ հրամանատարի 1-ին տե-

ղակալ, շտաբի պետ, գեներալ-մայոր Կամո Վարդանյանին, ՀՀ ՉՈՒ ԳԾ օպերատիվ վարչության պետ, գեներալ-մայոր Արտակ Դավթյանին, ՊԲ հրամանատարի 1-ին տեղակալ գեներալ-մայոր Միքայել Արզումանյանին, ՊԲ դիվիզիայի հրամանատարի տեղակալ գեներալ Արարատ Մելքումյանին, ՊԲ զինվորական կոմսար գնդապետ Մխիթար Ավչարյանին, ՊԲ դիվիզիայի հրամանատարի տեղակալ գնդապետ Նորայր Ասլանյանին, 3-րդ ԲԿ հրամանատար գնդապետ Գրիգորի Խաչատուրովին, ՀՀ ՊՆ ՊԵ վարչության պետ Լեւոն Այվազյանին:

ՀՀ ՉՈՒ Կազմավորման 25-րդ տարեդարձի առիթով ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով պարգեւների արժանացան նաեւ բարձրաստիճան եկեղեցականներ:

«Անդրանիկ Օզանյան» մեդալով պարգեւատրվեցին Արմավիրի թեմի առաջնորդ Սիրոն եպս Աղամյանը, Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Արմաշ եպս Նալբանդյանը, ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի դեկան, Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցու հոգեւոր տեսուչ Անուշավան եպս Ժամկոչյանը, վանորեք տեսուչ Արտակ եպս Տիգրանյանը, Արագածոտնի թեմի առաջնորդ Մկրտիչ եպս Պռոշյանը, Մեծ Բրիտանիայի եւ Իռլանդիայի հայոց թեմի առաջնորդ Հովակիմ եպս Մանուկյանը, Մայր Աթոռ Սբ Էջմիածնի հոգեւոր-կրթական բարձրագույն

հաստատությունների վերատեսուչ Գեորգ եպս Սարոյանը, Մայր Աթոռ Սբ Էջմիածնի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ եպս Բաբայանը, Մայր Աթոռ Սբ Էջմիածնի լուսարարապետ Հովհաննես եպս Հակոբյանը, Կանադայի հայոց թեմի առաջնորդ Աբգար եպս Հովակիմյանը, Մայր Աթոռ Սբ Էջմիածնի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան եպս Նավասարդյանը: «Գարեգին Նժդեհ» մեդալ հանձնվեց Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ Մակար վրդ. Հակոբյանին:

Շնորհաբաշխությունից հետո Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետը վերստին իր օրհնության ու գնահատանքի խոսքը բերեց ՀՀ ՉՈՒ բարձրագույն սպայակազմին՝ մաղթելով, որ միշտ հաղթական լինի Հայոց բանակը:

Տեղի ունեցավ նաեւ «Եռաբլուր» զինվորական պանթեոնում հանգչող հայորդիների նվիրված «Հուշամատյան ոգեշնչման» գրքի շնորհանդեսը:

Կաթոլիկ - Արեւելյան Ուղղափառ միջեկեղեցական երկխոսության հանձնախմբի 14-րդ նիստը

Հունվարի 22-28-ը Հռոմում տեղի ունեցավ Կաթոլիկ - Արեւելյան Ուղղափառ միջեկեղեցական երկխոսության միջազգային աստվածաբանական միացյալ հանձնախմբի՝ թվով տասնչորսերորդ նիստը: Երկխոսության համար նախատեսված աստվածաբանական թեման «Ս. Հաղորդության խորհուրդը եւ Եկեղեցին» էր: Նիստի ընթացքում միացյալ հանձնախմբի 26 անդամները քննարկեցին երկու եկեղեցական ընտանիքներում ս. Հաղորդության խորհրդի պատմական զարգացումը, ծիսական-աստվածաբանական առանձնահատկությունները եւ եկեղեցաբանական արտահայտումները:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Շարյագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սբ Էջմիածնից հանձնախմբի աշխատանքներին պաշտոնապես մասնակցեցին ԱՄՆ հայոց արեւելյան թեմի առաջնորդ հաճակ արք. Պարսամյանը եւ Մայր Աթոռ Սբ Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների, հրատարակչական եւ պաշտոնական մամուլի բաժինների տնօրեն Շահե ծ. վրդ. Անակյանը:



Հայոց Եկեղեցում ս. Հաղորդության խորհրդի ծիսական-աստվածաբանական առանձնահատկությունները ներկայացվեց «Ս. Հաղորդության խորհրդի պատմական զարգացումը. ս. Պատարագի եւ Եկեղեցու աստվածաբանական առնչակցությունները Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ավանդության մեջ» խորագրով գեկույցում: Հունվարի 28-ի եզրափակիչ նիստի ժամանակ միացյալ աստվածաբանական հանձնախմբի անդամները քննարկեցին նաեւ հետագա հանդիպման մանրամասները:

Հանձնախումբը, ընկալյալ հերթագայության համաձայն, հաջորդ նիստը գումարելու է Մայր Աթոռ Սբ Էջմիածնում՝ 2018 թվականի հունվարի 29-ից փետրվարի 5-ը՝ բարձր հյուրընկալությամբ եւ օրհնությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Շարյագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

Հանդիպման քննարկման նյութ են լինելու երկու եկեղեցական ընտանիքներում Ապաշխարության, Ձեռնադրության եւ Հիվանդաց օծման սրբազան խորհուրդների շուրջ ձեւավորված ընկալումները եւ ծիսական-աստվածաբանական առանձնահատկությունները:

ՏՅԱՌՆԸՆԴԱՌԱԾԸ

Մայր Աթոռ Ս. Էջմիածնում

Փետրվարի 14-ին Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին նշեց Տյառնընդառաջը՝ 40-օրյա մարդեղացյալ Աստվածորդու՝ մանուկ Հիսուսի տաճարին ընծայման տոնը:

Բերկրառատ տոնի սկիզբն ազդարարվեց փետրվարի 13-ի երեկոյան: Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ուղեկցությամբ հոգեւորականների թափորի, իջավ Մայր տաճար, ուր կատարվեց երեկոյան ժամերգություն:

Հավարտ ժամերգության, հանդիսապետությամբ Նորին Սրբության, տեղի ունեցավ նախատո-

նարկայի շուրջ Մայր Աթոռի միաբանները եւ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի սաները հանդես եկան հոգեւոր եւ ազգային երգերի կատարումներով:

Վերջում Նորին Սրբությունն օրհնեց ներկա բարեպաշտ ժողովրդին եւ տոնի առիթով փոխանցեց իր բարեմաղթանքները:

Իսկ փետրվարի 14-ին տոնախմբվեց Տյառնընդառաջի բուն տո-

«...Սիրելի՛ եղբայրներ եւ քույրեր, մենք շատ հաճախ հասուն տարիքում արդեն փնտրում ենք Աստծուն: Մենք շատ հաճախ հույս ունենք, որ Աստծուն գտնելով՝ մեզ հուզող բոլոր հարցերի պատասխաններն ունենալու ենք: Չէ՞ որ մեր շատ ու շատ հարցերին մարդկային ոչ մի եսկ, մարդկային ոչ մի պատասխան վերջնական լուծում չեն տալիս: Չէ՞ որ մեր հոգու եւ սրտի մեջ ունենք շատ ու շատ վերքեր, հոգեւոր վերքեր, որոնք դեռ արյունով ծորում են, որոնք դեռեւս մարդկային ոչ մի վիրակապ դարման չի տալիս: Չէ՞ որ մեր հոգու եւ սրտի մեջ շատ հաճախ նկատում ենք դատարկ սեւեւակների առատություն, որոնք միայն Աստված կարող է լցնել: Եվ ահա՛ մենք փնտրում ենք: Փնտրում ենք մեր տրամաբանությանը եւ մտքին հասու բոլոր տեղերում, մայր շատ հաճախ Աստծուն՝ Հիսուս Զրիստոսին, գտնում ենք այնտեղ, որտեղ երբեք չէինք էլ կարող սպասել»,- ասաց հայր Շահեն:

Անդրադառնալով դեռեւս տարիներ առաջ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությանը հաստատված Նորապսակների օրհնության ավանդույթին՝ հայր սուրբն իր խոսքն ուղղեց Պատարագի սրբազան արարողությանը ներկա Նորապսակ սարկավազներին եւ նրանց կողակիցներին՝ պատգամելով. «Ձեզ համար նույնպես, սիրելի՛ երիտասարդ զույգեր, փնտրտուք դառնում է կարեւորագույն մի պայման: Չէ՞ որ դուք էլ միանում, ամուսնանում, ընտանիք եք կազմում հենց այդ փնտրտուքի շնորհիվ: Եվ որքան էլ զարմանալի թվա, այդ փնտրտուքի ճանապարհին է, որ դուք ամենաշատն ենք հասունանում, որովհետեւ գտնում եք ձեր սիրած էակին, մեկին, ում հետ կիսելու եք ձեր ամբողջ կյանքը:

Ձեր կյանքի մնացած այն մասերին, երբ անցնելու եք միասին, փնտրեք Աստծու սերը, որովհետեւ միայն Աստծու սերն է, Աստծու ներկայությունն է կարողանալու սրբագործել ձեր սերը»:

Վերջում հայր Շահեն հավատավոր ժողովրդին հրավիրեց աղոթելու, որպեսզի իրենց կյանքի փնտրտուքները, հուզող հարցերի եւ խնդիրների պատասխանները կարողանան փնտրել եւ գտնել Աստծու մեջ, կարողանան ժպտացող մանուկ Հիսուսի մեջ գտնել այն ուժն ու գործունեությունը, որով կհաղթահարվեն բոլոր մարտահրավերները:

Հավարտ Պատարագի, հանդիսապետությամբ Ոսկան արք. Գալփաքյանի, կատարվեց Նորապսակ զույգերի օրհնության կարգ:

Արարողությունից հետո Մայր Աթոռի Նորապսակ միաբան սարկա-

վազներին եւ նրանց կանանց ընդունեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Նորին Սրբությունը, իր շնորհավորանքներն ուղղելով Նորապսակ երիտասարդներին, մարդեղ, որ Տիրոջ սերը եւ հովանին մշտապես

գորավիզ լինեն վերջիններիս նորակազմ ընտանիքներին եւ ապրեն առողջ ու երջանիկ կյանքով:

Հայոց Հովվապետը վստահություն հայտնեց, որ սարկավազների ընտանիքները՝ խարսխված քրիստոնեական վեհ ու նվիրական արժեքների վրա, պետք է սիրո մեջ ափսոսանքներով եւ ծաղկեւ ազգային նկարագրով:

Վերջում Նորին Սրբությունը Պատարագի աղոթքով օրհնեց ապագա քահանաներին ու նրանց կողակիցներին:



Նակ, ապա նաեւ՝ տարվա առաջին Անդաստանը, որի ընթացքում օրհնվեցին աշխարհի չորս կողմերը:

Այնուհետեւ «Քրիստոս փառաց» հոգեզմայլ տաղի երգակցության ներքո Մայր տաճարի իջման սբ Սեղանի կանթեղից վառված մոմով Ամենայն Հայոց Կաթողիկոսը Հիսուս Զրիստոսին խորհրդանշող կենսա-

նը: Միաժամանակ Մայր տաճարում մատուցվեց Պատարագ: Պատարագին էր Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների, հրատարակչական եւ պաշտոնական մամուլի բաժինների տնօրեն Շահեն Ժ. վրդ. Անանյանը:

Հայր սուրբն իր քարոզում անդրադարձավ օրվա խորհրդին՝ մաս-



պարգեւ լույսը փոխանցեց ներկա հավատավոր ժողովրդին:

Նախատեսակից հետո հանդիսավոր թափորն ուղղվեց դեպի միաբանական շենքի շրջաբակ, ուր, ներկայությամբ բազում հավատավոր հայորդիների, ձեռամբ Ամենայն Հայոց Հովվապետի, վառվեց Տյառնընդառաջի խարոյկը:

Նավորապես խոսելով մարդկային կյանքում հոգեւոր փնտրտուքի մասին: Ներկայացնելով մանուկ Հիսուսին տաճարին ընծայելու ավետարանական պատմությունը՝ հայր Շահեն նշեց, որ Սիմեոն Ծերունին, Աննա մարգարեուհին, նաեւ Հիսուսի ծնողները փնտրում էին իրենց սիրելի էակին:



Գեւորգյան հոգեւոր ճեմարանի երգչախումբը համերգներով հանդես կգա Ռուսաստանում եւ Բելառուսում

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի «Էջմիածին» երգչախումբը փետրվարի 5-ին մեկնեց Ռուսաստանի Դաշնություն, որտեղ հանդես եկավ համերգային ծրագրով:

Փետրվարի 4-ի երեկոյան «Էջմիածին» երգչախմբի սաները, ուղեկցությամբ Մայր Աթոռի հոգեւոր-կրթական հաստատությունների վերատեսուչ Գեւորգ եպս Սարոյանի, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Գարեգին վրդ. Համբարձումյանի եւ երգչախմբի հիմնադիր-ղեկավար Արթուր սրկ. Վարդանյանի, ընդունելության արժանացան Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից:

Գարեգին Բ Հայրապետն իր գնահատանքը փոխանցեց ճեմարանի տեսչությանն ու «Էջմիածին» երգչախմբի սաներին՝ ուրախություն հայտնելով նախաձեռնության առիթով: Նորին Սրբությունը վստահություն հայտնեց, որ աննախադեպ այս միջոցառումը ոգեւորություն ու մեծ խանդավառություն կառաջացնի ճեմարանականների մոտ՝ դրական ազդեցություն ունենալով ուսումնական գործընթացի վրա:



Հայոց Հովվապետը կարեւորեց երգչախմբի շրջագայությունը՝ ընդգծելով, որ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկե-

ղեցու եւ հայ ժողովրդի հոգեւոր-ազգային մշակույթը ներկայացվելու է երգի միջոցով:

Փետրվարի 5-ին երգչախումբը, բարձր հովանավորությամբ Ռուսաստանի եւ Նոր Նախիջեանի հայոց թեմի առաջնորդ Եզրաս արք. Ներսիսյանի, համերգով հանդես եկավ առաջնորդանիստ եկեղեցական համալիրում՝ Մոսկվայի հայ համայնքի անդամներին ներկայացնելով հոգեւոր եւ աշխարհիկ երգերով համեմված գեղեցիկ հայտագիր:

Երգչախումբը ելույթներ ունեցվա նաեւ Ռուս Ուղղափառ Եկեղեցու Մոսկվայի հոգեւոր ակադեմիայում, տարբեր հայ համայնքներում:

Երգչախումբը ռուսաստանյան շրջագայությունից հետո, առաջնորդությամբ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Գարեգին վարդապետի, մեկնեց Բելառուսի Հանրապետություն՝ Գրոդնո, որտեղ մասնակցեց շուրջ 45 երգչախմբերի մրցույթ-փառատոնին:

ՄԱՅՐ ԱԹՈՐ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ ՏԵՐԵԿԱՏԱՍԱՆ ԳՆԱՎԱՐԳ

ՄՐՏԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Սկիզբը՝ թիվ 2

Սյուրմեյանին ուղղված՝ 1922 թ. հոկտեմբերի 12 թվակիր նամակում Թեքեյանը գրում է, որ նրան ճանաչելուց հետո ինքն ունեցել է «մաքուր ու տաքացնող զգացում», մի բան, որ վաղուց չի ունեցել, իսկ այդքան տեղին՝ երբեք: Այդ նամակում Թեքեյանն Ամերիկյան բնութագրում է «զուտ ուժի եւ տգեղ ուժի երկաթե ու քարե գանգուած», Սյուրմեյանին խորհուրդ տալիս դիմակայել իրեն «չտեսնող» ու «տեսնել չուզող» ամբոխին, հաղթահարել բոլոր խոչընդոտները, բայց եւ՝ «... պիտի աշխատիս, տղա՛ս, որ սիրտդ մնայ ինչ որ է, յիշել յուզուիլ եւ կապուիլ գիտնալ անձերու եւ իրերու, որ ունենայ միշտ իր թաքուն պարտեզը կամ իր պզտիկ մատուռը...» (Վահան Թեքեյան, Նամականի, Լոս Անջելես, 1983, էջ 215, այս գրքից կատարված մեքսիկոյան տպագրությունը կնշվեն միայն Նամականի եւ էջ հղումով):

Իսկ Վառնայից գրված նույն թվականի դեկտեմբերի 21 թվակիր նամակում Կատարյանը է հայտնում, որ ինքն ավելի վաղ չի ճանաչել Սյուրմեյանին, այն ժամանակ, երբ «կրնայի օգտակար ըլլալ քեզի, քո մանկութիւնը պաշտպանել, քո որբութիւնդ մեղմել, քո գրկանդ ամոքել» (նույն տեղում, էջ 218): Նամակում Թեքեյանը գրառել է նաեւ իր մի բանաստեղծությունը («Կուզեմ մեկը»), որում ոչ միայն արտահայտվում է Թեքեյան անհատի հոգեկերտվածքը, այլեւ սիրո նկատմամբ ունեցած սիրագուրկ մարդու բաղձանքը՝ ունենալ մեկին.

Որ փոյթ չէ, թե ինձ համար չգզայ բնաւ ոչ մէկ սեր,

Բայց որ իմ սերս գիտնայ:

Չըսիրելով հանդերձ գիս՝ երախտագետ ինձ ըլլայ

Չիք սիրելուս համար շատ.

Սիրէ՛ սիրուիլը ինձմէ եւ դընձ վիզն ուսիս վրայ

Վստահութեամբ մը ազատ...:

Դիտելի է, որ վերոհիշյալ բանաստեղծությունը որքան որ ուղղված է անհայտ «մեկին», նույնքան էլ այն հասցեագրված

ՎԱԶՆ ԹԵՔԵՅԱՆ - ԼԵՎՈՆ ՉԱՎԵՆ ՍՅՈՒՐՄԵԼՅԱՆ.

ՄԵՐՏ ԲԱՐԵԿՎԱՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎՆԴԱՐԱ ԲՎԺՎՆՈՒՄ

Ե հենց 2. Սյուրմեյանին, ումից Թեքեյանը ոչինչ չի ուզել, ընդամենը՝ փոխադարձ սկիզբում ու, ինչպես այդ բանաստեղծությունում է ասվում, գիտենալը իր սիրո:

Սյուրմեյանը, իհարկե, ջերմությամբ ու պատրաստակամությամբ է ընդունել Թեքեյանի հոգու այս գեղումներն ու շռայլումները, որի դրսևորումներից մեկն էլ նրա՝ Թեքեյանին ուղղված նամակների դիմումի ձևն է ու ստորագրությունը՝ «սիրելի հայր», «իմ սիրելի հայր», «գավակդ՝ Չավեն», «Մեծցող գավակդ՝ Չավեն», «Սիրելի հայրս, մեծ եղբայրս, առաքելս, վարպետս» եւ այլն (տե՛ս «Սովետական գրականություն», Եր., 1980, թիվ 6, տե՛ս ԳԱԹ, Վ. Թեքեյանի ֆոնդ, թիվ 175): Պատասխանելով Սյուրմեյանի՝ իրեն ուղղված նամակներից մեկին՝ Թեքեյանը գրում է. «Ինչ բնականորեն գաւակդ կ'ըսես ինձի՝ որ անոր կարօտով տուայտեր եւ օրօրուել եմ միշտ, գիտնալով, որ գրկաբաց կընդունուիս՝ այն պատճառաւ, որ չափազանց կը նմանիս սրտով, մտքով ու կը խորհիմ հիմա - կերպարանքով ա՛լ անո՛ր, իմ երագիս գաւակին...» (Նամականի, էջ 217):

(Այդ «նմանությունը» ոմանց կարծել է տվել, թե Թեքեյանն ու Սյուրմեյանը արյունակց հայր ու որդի են: Այս առումով Թեքեյանն իր նամակներից մեկում վկայում է, թե ինչպես Միքայել Կյուրճյանի ձեռքն ընկած՝ Սյուրմեյանի նկարը նրան մտածել է տվել, թե վերջինս Թեքեյանի ապօրինի գավակն է՝ արդյունքը բանաստեղծի ստիպողական թափառումների: Այդ կասկածին տեղիք են տվել «Յորս՝ Վահան Թեքեյանին» մակագրությունն ու Սյուրմեյանի դեմքի նմանությունը Թեքեյանին):

Վերոհիշյալ բանաստեղծությունը, անշուշտ, Թեքեյանի կյանքի «լքումների ու յուսահատությունների» արտահայտություններից է, որ պարունակում է «Լոյս



ՎԱՐՆ ԹԵՔԵՅԱՆ

ե ըստուեր ջովէ ջով» եւ փաստում այն միայնությունը, որի մեջ հայտնվել էին թե՛ բանաստեղծ Թեքեյանը եւ թե՛ մարդ Թեքեյանը:

Նույն նամակում իր այդ միայնությունը Թեքեյանը նմանեցնում է «քարանձախի եւ աներակի», որից ազատվելու համար ինքը պետք ունի սրտակից հոգու, որի մի արտահայտությունն էլ նա իր նամակներում ու բանաստեղծություններում խտացնում է «գավակ» հասկացությամբ:

1922-ի նոյեմբերին՝ քեմալականների մուտքից մի քանի օր առաջ, Վ. Պոլսից հեռացել էր նաեւ Թեքեյանը՝ սկզբից Բուլղարիա, իսկ 1923-ի մարտի սկզբներին՝ Յունաստան՝ Ազգային պատվիրակության հանձնաժողովի հանձնարարությամբ հունական կղզիներում ծավալելով գաղթականներին օգնություն ցուցաբերելու կարեւոր գործունեություն, ուր խնդրահարույց էին մանավանդ գաղթականների սննդի, աշխատանքի, բնակու-

թյան, իսկ որբերի՝ դաստիարակության, հանգստի, ազգային կրթության եւ արդեն չափահաս որբուհիների հետագա ճակատագրերի լուծման հարցերը:

Յունաստանում կար շուրջ 50 գաղթատեղ: Այստեղ Թեքեյանը նախաձեռնում է ստեղծում է «Յունաստանի հայ որբախնամ միությունը», դիմումներ կատարում հունական իշխանություններին, հորդորում հայ ընտանիքներին իրենց հարկի տակ առնել անտուն հայ որբերին:

Ամերիկյան «Նիւ Իսթ Րըլիֆ» (Near East Relief) կոչվող (Մերձավոր Արեւելքի նպաստամատույց) կառույցը, որ ստանձնել էր որբախնամ գործը եւ նպաստավորվում էր նաեւ ամերիկացի հայերի տված գումարներով, անտարբեր ու անհոգ էր մանավանդ հայ որբերի ազգային նկարագրի ձեւավորման հարցերում:

Սյուրմեյանին ուղղված նամակների մեջ որբերի կյանքին վերաբերող անդրադարձները, Թեքեյանի մտահոգությունների արտահայտումը լինելուց գառ, նաեւ Սյուրմեյանի վիճակում հայտնված «որբ տղոց» ընդհանրացված ներաշխարհի արտահայտումն են, դրանով իսկ՝ հենց Սյուրմեյանի համար հայ իրականության նկատմամբ ազգային նկարագրի կերտող աշխարհայացք ձեւավորող: Իր նամակներից մեկում Թեքեյանը գրում է ամերիկյան որբախնամ մարմինների կեղծ ու պատիր գործունեության մասին եւ պատմում Կեդրոնական վարժարանի նախկին աշակերտ մի որբի նամակի մասին, ուր վկայվում է, թե ինչպես իրենց օրերով քաղցած թողնելով՝ ամերիկացի պաշտոնյաներն իրեն եւ իր մյուս ընկերներին «սինեմայի բռնեցին՝ հանձնարարելով պառկել, ելել, ժպտիլ ու լողալ - մի՛շտ անօթի» (Նամականի, էջ 534):

Շարունակությունը՝ էջ 6



ՄՐՓԻԱՐ ՄՐՓԻԱՐՅԱՆ

Ե՛վ արեւելահայ, Ե՛ւ արեւմտահայ գրականության պատմության մեջ ժամանակի պարբերականները, հանդեսներն ու ամսագրերը բացառիկ դեր են կատարել հայ գեղարվեստական գրականության տարածման ու զարգացման գործում: Նկատելի էր նաեւ այս կամ այն լրագրի, ամսագրի նախասիրությունը գրական որբել ժանրի նկատմամբ: Իրավացի է գրականագետ Գ. Անանյանը, երբ նման կարգի տարբերակում է կատարում մեր մի քանի նշանավոր ամսագրերի համար. «Յուսիսափայլն», օրինակ, նպաստել է գերազանցապես չափածոյի զարգացմանը, «Մշակի», «Նոր Դարի», «Արձագանքի» Էջերում հյուրընկալվել է արձակը, իսկ «Մուրճը» գրական բոլոր սեռերի նկատմամբ ցուցաբերել է հավասար հոգատարություն» (Գ. Գ. Անանյան, Յայ գրականությունը «Մուրճ» ամսագրում (90-ական թվականներ), Եր., 1972, էջ 3):

Այս առումով չափազանց կարեւոր է

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐՁԱԿԸ «ՄՇԱԿ» ԼՐԱԳՐԻ ԷՋԵՐՈՒՄ (1872-1900 թթ.)

Ինչ «Մշակ» պարբերականի գործունեությունը, որն իր գոյության շուրջ 50 տարվա ընթացքում (1872-1921) նշանակալի դեր է ունեցել հայ ժողովրդի հասարակական-քաղաքական, մշակութային կյանքում: Լինելով ժամանակի հայ մամուլի առաջադիմական օրգանը՝ լրագիրը մեծապես նպաստել է 19-րդ դարի վերջին քառորդի արեւելահայ պարբերական մամուլի վերելքին: Այն դարձել էր ժամանակի նշանավոր գրական դարբեններից մեկը՝ իր շուրջը համախմբելով բազմաթիվ նշանավոր գրողների եւ հասարակական գործիչների՝ ԲաժՖի, Գ. Սունդուկյան, Ա. Արասխանյան, Ռ. Պատկանյան, Խ. Մալումյան, Շիրվանզադե, Լեո, Գ. Բաշինջաղյան, Վ. Փափագյան, Ավ. Ահարոնյան, Ա. Արփիարյան, Պ. Պռոշյան, Ղ. Աղայան եւ ուրիշներ:

Չարկ ենք համարում ավելացնել, որ «Մշակ» լրագիրը հատկապես իր հիմնադիր-խմբագիր Գրիգոր Արծրունու գործունեության տարիներին (1872-1892) մի տեսակ բարեհաճ չգտնվեց չափածոյի նկատմամբ, եւ պատճառներից մեկն այն էր, որ իր գրական գործունեության հենց սկզբից Արծրունին համոզված էր, որ «հայը չունի երբեք բանաստեղծություն» (1877, հ. 6): 1877-ի հ. 39-ի առաջնորդողում արդեն («Մենք պոեզիա չունենք») Արծրունին իրեն հատուկ՝ առարկություն չընդունող տոնով գրել է, որ հայերն առհասարակ չեն ունեցել բանաստեղծություն, որովհետեւ մի ազգի մեջ ճշմարիտ բանաստեղծություն ունենալու համար հարկավոր է, որ այդ ազգի մեջ լինեք բարոյական գաղափարների ավելի

մեծ պաշար: Մինչդեռ մեզանում, ըստ Արծրունու, ցանած չեն եղել երբեք բարոյական գաղափարների այնքան սերմեր, ցանած չեն եղել մտքեր, որ կարողանար ստեղծվել ազգային բանաստեղծություն: Եթե փորձենք հասկանալ Արծրունու նման դիրքորոշման պատճառը, ապա այս դեպքում էլ շարժառիթը ռեալիզմի նկատմամբ նրա անվերապահությունն է: Բանն այն է, որ Արծրունու համոզմամբ՝ հնարավոր չէ բանաստեղծության միջոցով «տեսնել, ուսումնասիրել եւ պատկերել» հասարակության մեջ առկա նեգատիվ երեւույթները: Միջոց արձակը (նաեւ դրամատուրգիան) հեղինակին ավելի լայն հնարավորություններ է ընձեռում: Ահա թե ինչու վերը հիշատակված բարոյական գաղափարների պակասը լրացնելու գործում Արծրունին պոեզիային չի վստահում: Միեւնույն ժամանակ Արծրունին փորձում է իրական բանաստեղծից հեռացնել «ոտանավորը», քանի որ կարելի էր «բանաստեղծական զգացմունքն» է, որ կարող է դրսևորում ստանալ նաեւ արձակ գործերում: Այսպես էր Արծրունին դատում արդեն 1872-ին, եւ հավանաբար դրա պատճառն այն էր, որ այդ պահին իր գրական շրջապատում էր տեսնում պոեզիայի իսկական վարպետների (նրանց, ում Արծրունին գնահատում էր, քիչ ավելի ուշ մենք կանդրադառնանք): 1877-ի հ. 39-ի առաջնորդողում Արծրունին առանձնացնում է ռուսահայերի գրականության ճշմարիտ բանաստեղծներին («Խաչատուր Աբովյան, Ռ. Պատկանյան, Գ. Սունդուկյան եւ մասամբ Յ. Մելիք-Յակոբ-

յան (մենք ասում ենք մասամբ, որովհետեւ այդ վերջին գրողի, «Րաֆֆի») միայն արուզան ճշմարիտ բանաստեղծություն կարող է համարվել եւ ոչ թե նրա ոտանավորները») (1877, հ. 39): Նկատելով, որ սա Նալբանդյանից եկած ավանդույթ է. «արդյան հայ բանաստեղծություն» ասելով՝ Նալբանդյանը հասկանում էր ողջ գրականությունը:

Փոքր-ինչ այլ է Գր. Արծրունու վերաբերմունքը ժամանակի արձակագիրների եւ դրամատուրգների նկատմամբ: Երկու դեպքում էլ Արծրունին բարձր էր գնահատում հատկապես նրանց, ովքեր ըմբոստացել էին անցյալի գրական ժառանգության ու արժեքների դեմ՝ իրենց հետ բերելով «կենդանի, ծանոթ տիպեր» ու հասարակական երեւույթներ: Բնականաբար, «Մշակի» էջերում տպագրվում էին այն հեղինակները, որոնց ստեղծագործությունների գաղափարները համահունչ էին խմբագրի որդեգրած գրական քաղաքականությանը: Գրական երկի պրագմատիկ նշանակությունն ու օգտակարությունը այն հենասույնն էր, որի վրա պիտի կառուցված լինեք ստեղծագործությունը: Արծրունին նաեւ առաջ քաշեց հասարակական ախտերը մերկացնող ու վերահանող գրականության կարեւորությունը՝ լրագրի էջերում անդադար կոչ անելով գարկ տալ «գրականական այն ձեւին, որ անվանվում է անխնա ինքնաքննություն»:

Շարունակելի

Արշալույս ԳԱԼՍՅԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ

ՆԱՅԿԱԿԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ

(Ժամանակը եւ առանձնահատկությունները)

Սկիզբը՝ 2016-ի թիվ 23-24 եւ 2017-ի թիվ 1-2

Արեւելյան վերածննդի ընդհանուր համապատկերի մեջ Թամրազյանն ահա տեղադրում է Նաեւ հայկական վերածնունդը եւ ոչ միայն Աբեղյանի, այլեւ Ալիշանի ու Մառի որոշ մտքերի ապավիտությունը խորացնում իր տեսակետը: Փաստարկները նույնն են՝ «տնտեսական անսովոր վերելք, կառուցվում եւ ընդարձակվում են քաղաքները, ոտքի է կանգնում գյուղական քայքայված տնտեսությունը, ստեղծվում են բազում ազարակներ» (էջ 37): Թնդարկյան շարժումը դիտվում է որպես ռեֆորմացիա, ավելանում են կենտրոնաձիգ պետությունը, դրա հետ կապված՝ «...բուրժուական հարաբերությունների նախանշաններն ու աշխուժացումը», ավատական դարաշրջանի կապանքների թուլացումը, անհատի տեսակարար կշիռի ուժեղացումը, գրական երկերի շարքում հիշատակվում է Նաեւ Էպոսը, ոչ միայն քաղաքային, այլեւ գյուղական կյանքի դերի ուժեղացում, կյանքի վերածնություն... Անգամ բանը հասնում է «նախավերածնության», որին 10-րդ դարում հաջորդում է «վաղ վերածնությունը, որն ուրույն է-

տապներով շարունակվում է մինչեւ 12-րդ դարը, ապա մի շարք բնագավառներում նոր թռիչք ապրում 13-14-րդ դարերում» (էջ 36): Նախավերածնությունն էլ հասցվում է մինչեւ 7-րդ դար՝ Չվարթոնց եւ Յոնիսիմե տաճարների շինարարություն, Շիրակացի, Սյունեցի ու Դավթակ Զերթող... Սա եղավ համատարած վերածնունդ ուր դար շարունակ՝ 7-14-րդ դարեր: Չգալով, որ ժամանակային սահմանները շատ ձգվեցին՝ Թամրազյանը հավաքում է խոսքի փեշերը. «Այսպես թե այնպես, 10-12-րդ դարերում, շուրջ հարյուր հիսուն տարվա խաղաղ աշխատանքի, անկախության եւ տնտեսական վերելքի մթնոլորտում, ծաղկում է հայկական վերածնությունը՝ դառնալով յուրօրինակ նախերգանք եվրոպական վերածննդի համար» (էջ 36): Սա արմատապես վիճելի տեսակետ է բոլոր առումներով, առավել եւս՝ որպես եվրոպական վերածննդի «նախերգանք»: Ըստ էության՝ գործ ունենք երկրի տնտեսական վերականգնման, նորոգման, զարգացման ու կառուցման հետ, որտեղ «վերածնություն» բառը միմիայն պայմանական կիրառություն ունի՝ որպես կյանքի ընդհանուր վե-

րածնություն, ծաղկում, զարգացում, կենսամակարդակի բարձրացում, ապահովություն: Ինքը՝ հեղինակը եւս, երբեմն կասկածամիտ է, բայց ընդամենը սուկ այդքանը. «Եվ թե» կյանքի վերածնությունը եւ եվրոպական կոչված վերածնությունը շատ կողմերով ուրույն երեւոյթների ծնունդ են եւ ունեն մեծ տարբերություններ, սակայն մի շարք կողմերով էլ հարազատ են միմյանց» (էջ 38): Եվ որպես հարազատության նախանշաններ՝ նշվում են կյանքի վերածնության հիշյալ դեպքերը՝ շինարարություն, կառուցում՝ Անի, Աղթամարի եկեղեցի: Նույն կասկածանքներից են ծնվել Նաեւ այս տողերը. «Մեզանում, հասկանալի պատճառներով, վերածնությունը ավարտուն պատկեր չի ստացել, այսինքն՝ չի անցել եվրոպական վերածնության տեսական ու բնական ճանապարհը, ի վերջո կիսատ է մնացել: <...> Մենք չունենք շեքսպիրյան դրամատուրգիա եւ Սերվանտեսի արձակը, չունենք Ռաֆայել, Լեոնարդո դա Վինչի, Ռեմբրանտ, այսինքն՝ մեր կյանքը չէր տալիս այն հզոր տեսական լիցքերը, որոնք անհրաժեշտ էին նման նվաճումների համար: Բայց մեզանում էլ



ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆ

զարգացման առաջին հզոր լիցքերի շնորհիվ դեռ եվրոպայից առաջ ստեղծվել է աշխարհիկ պատմագրություն ու փիլիսոփայություն, կյանքի ներթափանցումով՝ ճարտարապետություն եւ մանրանկարչություն, կրոնական դոգմատիզմից ազատագրված հարուստ հույզերի եւ խոհերի մեծ քնարերգություն՝ հումանիզմի գաղափարախոսությամբ, վերջապես գեղագիտական-քննադատական նորագույն հայացքների մի ինքնատիպ համակարգ, որը մի շարք կողմերով հարազատ էր ավելի ուշ երեւան եկած եվրոպական վերածննդի գեղագիտությանը եւ քննադատությանը» (էջ 49): Այս ամենից մեկ հետեւություն կարելի է անել՝ ցանկալի է, բայց ձգել, հասցնել հնարավոր չէ:


Իսկ արդեն Կոստանդին Երզնկացու առիթով կարդում ենք. «Թերեւս հարմար կլինի Երզնկացու պոեզիայի էությունը բնորոշել այսպես՝ վերածնության երգ: Եվ դա պետք է հասկանալ լայն առումով՝ որպես բնության ու հոգու զարթոնքի եւ սիրո ծաղկման հավերժական մեղեդի» (էջ 494): Այս ամենը գրականագետը համարում է «ստեղծարար սիրո» զգացում, ինչը գեղեցիկ է հնչում, բայց, ավա՜ր, վերստին կապ չունի եվրոպական վերածննդի առանձնահատկությունների հետ: Հարցին թեթեւակի անդրադարձ կա Նաեւ Ժենյա Զալանթարյանի «Հայ գրականագիտության պատմություն. V-XIX դարեր» (Երևան, 1986) մենագրության մեջ: Հարունակությունը՝ էջ 7

ՍՈՒՐԲ ՄԱՐԳԻՍ ՉՈՐԱՎԱՐ

Սկիզբը՝ թիվ 2

Ս. Սարգսի սիրո եւ ամուսնության փափագակատարի այս գործառնությունը, նրա կերպարի արտաքին նկարագրին զուգակցված, դրսեւորում է գտել վերելում արդեն հիշատակված ժողովրդական երգերում՝ տարբեր աղոթքային բանաձեւերում:

Մի պատճառաբանական զրույցում ներկայացվում է ս. Սարգսի կապը հացաբույսերի, մասնավորապես՝ ցորենի եւ դրանից պատրաստված փոխիկի հետ, որն ամենուրեք համարվում է ս. Սարգսի տոնի ծիսական կերակուրը: Ուլիանոս թագավորի դեմ կռվելուց հետո ս. Սարգիսը քաղցում է եւ մտածում, թե որտեղից մի կտոր հաց ճարի: Այդ պահին ուժեղ քամի է բարձրանում եւ երկնքից մի քանի ցորենի հասկ է բերում գցում Սարգսի առաջ: Նա վերցնում է դրանք, ճմռում ափի մեջ, հատիկները հանում գցում բերանը, ուտում, կշտանում: Եվ ապա խնդրում է Աստծուն, որ ով տարվա մեջ այդ հատիկների հիշատակին յոթ օր ծոմ պահի, ուրբաթ օրն էլ փոխիկը թաթախվի, նրա մուրազը տա, ինչ խնդրի կատարվի (Ա. Դանայանյան, Ավանդապատում, Եր., 1969, էջ 366):



պատրաստում են երկու տեսակի ուտելիք. Մեկը խաղողահյութով կամ մեղրաջրով ու շաքարաջրով պատրաստված շաղխն է, մյուսը՝ փոխիկի խաշիլը, որը ճաշակում են յուրով. երկուսն էլ խիստ սիրված ու տարածված են Հայաստանի գրեթե բոլոր ազգագրական շրջաններում, մտնում են ժողովրդի ճաշացանկում՝ իբրեւ ազգային կերակրատեսակներ, անկախ ծիսական արարողություններից: Ծիսական է համարվել այն փոխիկը, որի ցորենը խարկվել է եւ աղացվել Ս. Սարգսի տոնի ժամանակ: Այն երեկոյան տախտակի վրա դնում էին դռան ետեւը կամ տանիքին եւ մատուցում ս. Սարգսին՝ մրմնջալով աղոթքի հատուկ բանաձեւը. «Մենքիմ քի, ատենահաս բոզ ծիսավոր սըփ Սարգիս, դու կգաս քու ձիու ոտ գարկիս մեջ»:

Ս. Սարգսի՝ ամուսնության հովանավորման եւ երիտասարդ զույգերին իրենց սիրո փափագին հասցնելու գործառնությունը դրսեւորված է դարձյալ մեկ ժողովրդական ծիսական արարողության մեջ՝ կապված հացի եւ ջրի ճաշակման հետ: Ս. Սարգսի տոնի ուրբաթ գիշերը նորահաս երիտասարդները՝ հատկապես աղջիկները, աղի բլիթ են ճաշակում, որպեսզի երազում չուր տեսնեն: Ս. Սարգսի հրամա-

նով՝ ճակատագրի կողմից կանխորոշված կյանքի ապագա ընկերները շուր եւ տալիս ծարավներին, որով կանխագուշակվում են երիտասարդների ամուսնական զուգընկերները: Կամ էլ ս. Սարգիսն ինքն է կանխորոշում ապագա ամուսնական զույգերին, նրանց երջանկությունն ու դժբախտությունը (Մ. Աբեղյան, Ազգագրական եւ գրական-բանասիրական հետազոտություններ, Եր., 1975, էջ 81): Բացի այդ, նույն երեկոյան նորահաս աղջիկները շաղխված փոխիկից բրդուճ էին դնում տան կտուրին եւ հետեւում. եթե ճնճուկը վերցնում էր այդ բրդուճը եւ թռչում, թառում մերձակա տների տանիքներից մեկին, ուր նորահաս երիտասարդ էր ապրում, ապա դա նախանշան էր, որ այդ երիտասարդն էր դառնալու իր ապագա փեսացուն:

Ս. Սարգսի՝ ամուսնության հովանավորման այս գործառնությունն է հարում Նաեւ նրա՝ ծննդկանին պաշտպան ու պահպան դառնալու ֆունկցիան՝ կրկին դրսեւորված աղոթքներում: Դրանցից մեկում սուրբը բնորոշված է իբրեւ «Դեւերու հալածիչ եւ ցավերու փարատիչ», որն այլ բան չէ, քան հիվանդություն հարուցող դեւերին հալածելը եւ նրանց պատճառած ցավերից հիվանդին պաշտպանելը: Վանից գրառված ծննդկանի աղոթքի մեկ այլ տարբերակ սկսվում է հետեւյալ երկտողով.

Սուրբ Սարգիս ամուր պարիսպ, // Ամուրական խաչն է թելիս (Ս. Հարությունյան, Հայ հմայական եւ ժողովրդական աղոթքներ, Եր., 2006, 146 էջ), ուր սուրբը հանդես է գալիս որպես ծննդկանին պահպանող ու պատսպարող ամրակուռ ու անսասան ոգի:

Ժողովրդական զրույցներում տարածված է նաեւ մեկ այլ հավատալիք. գիշերով մարդու վրա գայլերի հարձակման դեպքում, եթե վտանգվածը ս. Սարգսին օգնության կանչի, ապա սուրբը կգա եւ կփրկի գայլերից:

Հայ բանավոր ավանդության մեջ՝ մասնավորապես «Սասնա ծռեր» հերոսավեպում, ս. Սարգիսը հանդես է գալիս որպես վիպական գործող անձ, որպես Սասնա դյուցազունների գործակից ու հովանա-

վոր (Նույն տեղում՝ էջ 148): Վեպում նա կրում է Նույն «Ծուռ» մակդիրը՝ Ծուռ Սըրգո, ինչ Սասնա մյուս հերոսները: Սասնա դյուցազունները համարվում են Ծուռ Սըրգոյի ճորտեր ու փոքրավորներ (իմա՝ սպասավորներ): Երբեմն Ձենով Հովանի անվան համաբանությամբ կոչվել է Ձենով Սարգիս՝ դարձյալ իբրեւ հովանավոր Սասնա կրտսեր ծռերի:

Ի դեպ, զինվորականներին հովանավորելու ս. Սարգսի այդ հնավանդ գործառնությունը դրսեւորված է Նաեւ նորոյա ժողովրդական հավատալիքներում եւս:

Սուրբ Սարգսին նվիրված ժողովրդական աղոթքներ եւ երգեր

Սուրբ Սարգիսն էր խըռ ծիսավոր, Ձենքի մըզըրախ փունջուխլավոր, Առավ թռավ զըր սիրու կաքավ, Սիրու ճանպարհի մըզի տվավ: Սուրբ Սարգիսն էր մեծ զորավոր, Չահել-ջիվան, ինք ծիսավոր, Տուշմինի հաղթող՝ իր սուրբ հավտով, Չիքը ձենողին՝ շուտով հասնող: Ըզի մեռնի, ով սըբ Սարգիս, Չիել ծիսվը մըզի լե հասնիս, Թոփ մըզըրախով խոջատ Էղնիս, Չմըզի հասցուն մըր մուրագին:

Քիշեր ասի տուս Էլլայ, ՄԷկ որավոր սուփ տեսայ, Ասի, լացի, ոթքն ինկայ, Ասի, հայր սուրփ, անունդ ի՛նչ է, -Իմ անունս սուփ Սարքիս, Օրթուս անուն՝ սուփ Մարտիրոս, Ծիս կըքալե ամպի վըրան, Անթաթար ծովի վըրան, Գնա, ասա քերիներուն, Ազատ անե իր արեւուն:

Սուրբ Սարգիս, ամուր պարիս (պարիսպ), Ամուրական խաչն ի թիվիս, Թագայ խացի խոտ իրե, Էլչեք, տեսեյք վով իրե: Սուրբ Սարգիսն էր խըռ ծիսավոր

Ձենքի մըզըրախ փունջուխլավոր... Կամ՝ Սուրբ Սարգիսն էր մեծ զորավոր Չահել-ջիվան, ինք ծիսավոր... ԱՆՆԱ ԴՊՐՈՍՅԱՆ

Պաշտամունքը
Ս. Սարգսի տոնի ծիսական ուտեստը փոխիկն է՝ բոված ցորենի այլուրը, որից



Հայոց պատմության մեջ կան անհատներ եւ թեմաներ, որոնք հավերժականի չափում ունեն։ Նման բացառիկ երեւոյթների թվին են պատկանում Չորավար Անդրանիկը, Նրա կյանքը, գործն ու սխրանքը։

Հայոց հավերժական Չորավարի մասին շատ է ասվել, խոսվել, գրվել, սակայն դա միայն սկիզբն է։ Անդրանիկի անձն անցնող ժամանակի համեմատ էլ ավելի ընդգրկուն ու տարողունակ չափումներ է ընդունում։ Այդպես է լինում նաեւ հայրենիքի մեծ բանաստեղծների, գրողների, արվեստագետների պարագայում։

Այո՛, դա այդպես է, անկասկած։ Չորավար Անդրանիկի՝ ռազմի դաշտերի բոցերում կերտված հերոսաշունչ կերպարը մեզանում ունի միմիայն համագային եւ համաժողովրդական բնույթ։ Այլ կերպ պարզապես հնարավոր չէ պատկերացնել։ Ընդ որում՝ հայ մեծանուն գործարարի որպես այդպիսին ընդունում է նաեւ համաշխարհային հանրությունը, միջազգային պատմագիտական միտքը։ Ըստ փաստերից բերելը միայն մեկ խոսուն օրինակ։ Ռուս հանրահայտ ռազմական պատմաբան Ալեքսեյ Շիշովը, երկա-

րատել ուսումնասիրությունների արդյունքում, 2005 թ. հրապարակեց հանրագիտարանային բնույթի մի աշխատություն՝ «100 մեծ հերոսները» վերնագրով (А. Шишов, 100 великих героев, М., 2005)։ Այդ գրքում տեղ են գտել ողջ մարդկությանը քաջ հայտնի հարյուր առավել երեւելի անուններ, որոնց գործերն ու գործունեությունը բախտորոշ ու ճակատագրական է եղել ոչ միայն սեփական ժողովրդի, այլեւ համաշխարհային պատմական ընթացքի համար։

Գրքում ընդգրկված ժամանակաշրջանն անսահմանափակ է՝ անտիկ ժամանակներից մինչեւ թանկերորդ դարի սկիզբը։ Գրքի ընթերցումը հպարտության եւ արժանապատվության խորունկ զգացումներ է ծնում հայ մարդու, հայազգի ընթերցողի հոգում։ Այնտեղ ներկայացված են համաշխարհային պատմության ամենահզոր դեմքերը՝ Ալեքսանդր Մակեդոնացին, Հանսիբալը, Հուլիոս Կեսարը, Սպարտակը, Աթիլան, Ժաննա դը Արկը, Վաշինգթոնը, Նապոլեոն Բոնապարտը, Լակշմի Բայը, Կուտոզովը, Սուվորովը, Գարիբալդին եւ այլ մեծեր։ Նրանց կողքին եւ նրանց

ՉՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԿԵՐՊԱՐԸ ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱԳԵՆԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՆՁԵՐՈՒԹՅԱՄԲ...

հետ է հայազգի մեծագույն հերոսը՝ Չորավար Անդրանիկը։ Գրքում հերոսները ներկայացված են ըստ ժամանակագրական կարգի։ Ըստ այդմ՝ հայազգի հերոսը 99-րդն է։ Իսկ ցանկը եզրափակում է մեզ քաջածանոթ թուրք հերոսը՝ Մուստաֆա Զեմալը։ Վերջինս, իրոք, ճակատագրական դեր է խաղացել իր հայրենի երկրի նորագույն պատմության մեջ։ Առաջին համաշխարհային պատերազմում պարտված Թուրքիայի վրա պատմությունն անխուսափելիորեն անհետացման տապալանաքարն էր դնելու։ Սակայն Զեմալին եւ իր զինվորներին հաջողվեց վերածնել կործանման դատապարտված իր երկիրը։ Եվ այսօրվա Թուրքիան, որը դարձել է տարածաշրջանային գերտերություն, իր գոյության համար իրավամբ պարտական է Զեմալին։

Ինքը՝ թուրք առաջնորդը, մեծապես հասկացել է զնահատել է հայազգի անզուգական հերոսի դերը հայոց ճակատագրում։ Այսպես՝ 1934 թ. օգոստոսի 31-ին Թուրքիայի հանրապետության հիմնադիրն ընդունելություն էր կազմակերպել՝ ի պատիվ այդ օրերին իր երկրում ընթացող լեզվաբանության միջազգային գիտաժողովին մասնակից օտարազգի լեզվաբանների։ Երեկոն հետաքրքիր դարձնելու համար Զեմալն առաջարկում է հյուրերին իրենց մայրենի լեզուներով մեկական երգ երգել։ Ընդունելությանը ներկա է եղել անվանի լեզվաբան, թուրքագետ Հակոբ Մարթայանը, ում շանքերով նշանակալից բա-

րեփոխումներ էին կատարվել թուրքերեն լեզվում։ Ի դեպ՝ Հ. Մարթայանն էր Զեմալին անվանել «Աթաթուրք» (թուրքերի հայր)։ Վերջինս առաջարկում է, որ մի երգ էլ հայազգի լեզվաբանը երգի։ Մարթայանը ոտքի է կանգնում եւ սկսում է ինքնամոռաց երգել գուսան Շերամի հայտնի երգը՝ Նվիրված Անդրանիկին։

*Իբրեւ արծիվ սավառնում ես
լեռ ու ժայռ
Թնդացնում ես երկինք, երկիր
տենչավառ,
Սուրբ անունդ պիտի հիշվի
դարեդար,
Հսկա լեռինք քեզ ապաստան,
Անդրանիկ...*

Ներկա թուրք պաշտոնյաներն անթաքույց ատելությամբ եւ կատաղությամբ սպասում են Աթաթուրքի արձագանքին։ Վերջինս համբերատար լսում է երգը եւ սառնասրտորեն ասում. «Անդրանիկը մեր կատաղի թշնամին էր։ Անոր սուրբն հազարավոր թուրքեր ինկան։ Այդ տեսակ հերոս հայերը անցյալին չեն ունեցած, ներկայիս չկա եւ ապագային ալ չի սպասվիր» (տե՛ս «Տեղեկատու» (Կահիրե), 2013 թ. հունվար, թիվ 66, էջ)։

Իր այդ վերաբերմունքով Աթաթուրքն արտահայտում էր թուրք հանրության մտայնությունը։ Այս առումով տեղին ու ճշմարտացի դիտարկումներ է արել անվանի բանասեր ու պատմաբան Կարո Վարդանյանը՝ նշելով հետեւյալը. «Թուրքը մեր շարքերում իրեն արժանի միայն մի թշնամի է ճանաչել՝ Չորավար Անդրանիկին կամ, ինչպես ինքն էր կոչում, Անդրանիկ

Փաշային։ Մեր մյուս հերոսներին նա ճանաչել է մեկ շաբաթ, մեկ ամիս, մեկ տարի... այնքան ժամանակ, մինչեւ կարողացել է հարթել նրանց, հալածել կամ սպանել, որից հետո մոռացության է մատնել։ Անդրանիկը թուրքի համար այդպես էլ մնաց անպարտելի, մնաց որպես մշտնջենական մղձավանջ ու պատուհաս վրիժառու» (Կ. Վարդանյան, Անդրանիկ, Ծանոթ եւ անծանոթ հերոսապետը, «Պատմաբանասիրական հանդես», 2015 թ. թիվ 1, էջ 83)։

Այն, որ Անդրանիկը ոչ միայն հայոց հերոսն է՝ համագային ու համաժողովրդական չափումներով, այլեւ համաշխարհային կարգի գորավար, կարող են վկայակոչել նաեւ այլ ժողովուրդներ (թրդերը, բալկանյան ժողովուրդները)։ Զրդերը բազմիցս են ակատես եղել Անդրանիկի եւ զինակիցների կատարած սխրալից գործողություններին։ Այդ առումով շատ երգեր ու զրույցներ են հյուսվել թուրք ժողովրդի մեջ։ Անդրանիկի հանդեպ սերն ու նվիրումը առկա են բուլղար, հույն եւ սերբ ժողովուրդների շրջանում։

Անդրանիկի կյանքը եւ գործունեության բազմաթիվ հետքեր ու վկայություններ են պահպանվել հատկապես Բուլղարիայում։ Հայ գորավարը դեռեւս 1907 թվականից բնակություն էր հաստատել բուլղարական Կալաթա քաղաքում եւ գործուն մասնակցություն ունեցել բուլղարների ու մակեդոնացիների ազատագրական շարժմանը՝ ընդդեմ թուրքական բռնապետության։

Շարունակությունը՝ էջ 8

ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆ - ԼԵՎՈՆ ՉԱԿԵՆ ՍՅՈՒՐՍԵԼՅԱՆ. ԱՆԵՏ ԲԱՐԵԿՎԱՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎՆԴԱՐՁ ԲՎԺՎՆՈՒՄ

Սկիզբը՝ էջ 4

1923 թ. հուլիսի սկզբներին Թեքեյանը մեկնում է Աթենքից։ Նույն ամսի կեսերին նա արդեն Ալեքսանդրիայում էր։ Ընտանիքը մեկնում է Փարիզ, կուսակցական գործերով լինում Լիբանանում, Ժնևում, Ալժիրում... Այս շրջանում Թեքեյանն իր մի շարք նամակներում Սյուրմեյանին է ուղարկում նաեւ իր նոր գրած մի քանի բանաստեղծությունները, որոնց հիմնական նպատակը ոչ այնքան Սյուրմեյանի կարծիքն իմանալն էր, որքան Սյուրմեյանի մեջ գրական հետաքրքրությունների բորբոքումն ու խթանումը։

Թեքեյանի փայլալայած ծրագրերից մեկը Հունաստանում եւ Սիրիայում ապաստանած որբերին Հայաստան տեղափոխելն էր՝ այլապես «անոնք կ'սպառնան եւ կը փճանան»։ Նա արդեն երկու անգամ առիթ էր ունեցել լինել Հայաստանում։ Առաջին անգամ 1911-ին՝ որպես եգիպտահայոց կողմից ընտրված պատվիրակ մասնակցելով Էջմիածնում կայացած Գեւորգ Ե կաթողիկոսի ընտրություններին (Հայաստանից իր ստացած տպավորությունների տակ Թեքեյանը գրեց «Արարատյան դաշտին մեջ» բանաստեղծությունների շարքը, որը ձոնեց Լեւոն Բաշայանին)։ Երկրորդ այցելությունը կապված է 1919-ին թուրքահայերի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության հետ բանակցություններ վարելու Ազգային պատվիրակու-

թյան ներկայացուցչի գործընթացի հետ։ Ասենք, որ Թեքեյանը միշտ էլ փայլալայել է Հայաստանում ապրելու ու ստեղծագործելու երազանքը եւ աշխատել նաեւ Սյուրմեյանի մեջ բորբոք պահել այդ ցանկությունը։ Այսպես՝ 1924 թ. դեկտեմբերին Սյուրմեյանին գրել է. «Կոստան Զարեանը հոս է (Փարիզ - Ա. Ա.), Հայաստանն եկած (Չարյանը Հայաստանից հեռացել է 1924 թ. ամռան վերջերին եւ սկզբնական շրջանում ներկայանում էր որպես Լուսժողովի եւ ԶՕԿ-ի ներկայացուցիչ - Ա. Ա.), ... ըսի, որ կը մտածեիք, դուն ու Վահրամը (խոսքը բանաստեղծ Վահրամ Կաքավյանի մասին է, ով Պոլսի Կեդրոնականի սաներից էր, եւ ում Թեքեյանը շատ է օգնել կրթություն ստանալու գործում - Ա. Ա.) Հայաստանի մեջ ազարակ մը ունենալ՝ տպարանի մը եւ ինձի հետ. հավաստեց, որ ամեն դիւրութիւն կուտայ կառավարութիւնը։ Զանի մը օր առաջ տեսայ նաեւ Երկրագործութեան Կոմիսար Արամայիս Երզնկեանը։ Հայաստան կը հրաւիրեն, բայց առանց քեզի չեմ երթար» (Նամակակնի, էջ 276)։ Հայաստանի վերաբերյալ Թեքեյանի ծրագրերը շատ ավելի մեծ են եղել, որը համահունչ էր այդ ժամանակ գործող «Հայոց խորհրդակցական խառը համաժողովի» ծրագրերին՝ Սիրիայից, Հունաստանից, Բուլղարիայից եւ հայաշատ այլ բնակավայրերից Հայաստան տեղափոխել 50 հազար գաղթականի։

Ելնելով բուլղարիայի դիրքերից՝ Ալ. Սյուրմեյանն ու Արտ. Կարիսյանն այս ընթացքում Ռամկավար Ազատական կուսակցության դեմ մի քանի ելույթ ունեցան, որն ինքնին ուղղվեց նաեւ Թեքեյանի դեմ, քանի որ նա այդ կուսակցության օրգան «Ժողովրդի ձայնը» թերթի խմբագիրն էր։ Եվ ուրեմն՝ Հայաստան մեկնել հնարավոր չէր։

Մտում էր սպասել ավելի բարեկաստ ժամանակների։ 1925-ին Սյուրմեյանն արդեն հասցրել էր ավարտել երկրագործական քուլթը, ինչ-որ գրություններ տպագրել անգլերենով՝ ավելի ու ավելի մտնելով ամերիկյան կյանքի մեջ։ Ծիշտ է, Թեքեյանին ավելի հազվադեպ էր գրում, բայց դեռ շարունակում էր իր նվիրումները հայտնել նրան։ Վերոհիշյալ նամակից անց՝ 8-ը նոյեմբերի 1925 թվակիր նամակում Թեքեյանը գրում է Սյուրմեյանին, որ իր անմասնորոպ պատրաստակամության փոխարեն ինքը որեւէ երախտագիտության չի սպասում, որ ինքը բավարարված է «մտերիմ տղու» այն զգացմամբ, որ տածում է Սյուրմեյանը իր նկատմամբ. «Ես շատ եմ միանալ, միշտ միանալ ապրած։ Ալ յոյս չունեի՝ թե կրնայ փոխուիլ ատիկա։ Ներսէն փսորելով՝ դուրսէն կը կարծրանայի հետզհետէ։ ... Այդ յոյսը տուիր դուն ինձի եւ քեզմով ես մօտեցայ նորէն կեանքին» (Նամակակնի, էջ 284)։

Այդ նույն նամակում Թեքեյանն արտահայտում է նաեւ իր հրճվանքը՝ կապված Հայաստան գնալու նոր հնարավորության հետ. «Ըբզ Հայաստան կը հրաւիրեն ար-



դեն։ Ի՞նչպես։ Ուրեմն կ'երթա՞նք կոր, ե՞րբ։ Ու չմոռնա՞ս ըսելու՝ թե հետո մէկը պիտի առնես Եգիպտոսէն, որ ոչ ոքի թշնամի է այնտեղ եւ ամէն պարագայի մէջ շատ բարեկամ է հայ երկրին ու ժողովրդին» (Նամակակնի, էջ 286)։ «Ամեն պարագայի մեջ» ասելով՝ Թեքեյանը նկատի ուներ երկրի խորհրդայնացումը, որի կողմնակիցը չէր ինքը եւ այդ հարցում ուներ իր պատկերացումները, բայց երկիրը երկիր էր մտում, ու ժողովուրդը՝ ժողովուրդ, որոնց եւ «շատ բարեկամ» էր ինքը միշտ։ Բայց այս անգամ էլ վիճակված չէր իրականացնել այդ մեկնումը։ Պատճառներից մեկն էլ Սյուրմեյանի թոքերի սուր հիվանդությունն էր։

Շարունակելի
Արթուր ԱՎԿԳՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր



Ինչպես հայտնի է, մշակութային աշխարհը նույնքան հին է, որքան մարդկային քաղաքակրթության պատմությունը: Ի սպառնայից ասվածին՝ բավական է հիշել տակավին քարե դարում ապրած մարդկանց կողմից քարանձավների վրա պատկերված նկարները: Ըստ երեւոյթին՝ վերջիններիս մեծ մասն ունեցել է ծիսական նշանակություն, բայց անկախ ամենից՝ դրանք մարդկային մշակութային ժառանգության մի մասն են: Հազարամյակների ընթացքում համաշխարհային մշակույթը լուրջ զարգացում է ապրել, դարձել է ավելի մշակված ու կատարյալ: Առաջացել են մշակույթի բազմաթիվ ճյուղեր ու ենթաճյուղեր, եւ ներկա դրությամբ մենք ունենք վիթխարի մշակութային ժառանգություն, որը ցնցում է մեզ իր մասշտաբով, խորությամբ եւ բազմազանությամբ: Բազմազանություն ասելով՝ նկատի ունենք զանազան էթնոսների ստեղծած մշակույթները, որոնց սինթեզի ու միախառնության արդյունքում մենք ունենում ենք շատ ավելի հետաքրքիր, հարուստ ու բովանդակալից պատկեր, քան եթե այդ միախառնությունն ու սինթեզն առհասարակ տեղի չունեւային: Որքան էլ մենք խոսենք ազգային մշակույթների ինքնատիպության ու յուրօրինակության մասին, մենք պիտի հասկանանք, որ գոյություն չունի բացարձակ անկախ մշակույթ, որ դարերի ընթացքում ենթարկված է չլինի զանազան ազդեցությունների: Վերցնենք, օրինակ, հայկական մշակույթը: Հազարամյակներ ապրել ենք տարբեր ազգերի կողքին (պարսիկներ, արաբներ, բյուզանդացիներ, թուրք-սելջուկներ, վրացիներ եւ այլք): Անկասկած՝ մեր ժողովուրդը բավականին մեծ ջանքեր է գործադրել իր ազգային դիմագիծը, հավատը եւ մշակութային ինքնատիպությունը պահպանելու ուղղությամբ: Հակառակ պարագայում մեր ժողովուրդը դեռեւս հարյուրամյակներ առաջ ուծացված կլինեք եւ այլեւս գոյություն չէր ունենա իբրեւ առանձին էթնիկ հանրություն: Ինչպե՞ս սխալ կլինի եզրակացնել, թե մեր մշակույթն առհասարակ որեւէ ազդեցության չի

Մշակութային աշխարհը եւ դրա ազդեցությունը մարդու հոգեբանական վիճակի վրա

ենթարկվել: Ի դեպ, այդ ազդեցությունը կարող է լինել թե՛ դրական եւ թե՛ բացասական: Ասվածն առավել առարկայական դարձնելու համար բերենք մի պարզ ու ակնառու օրինակ՝ ժամանակակից հայկական երաժշտությունը: Մեր մտավորականները, արվեստագետներն ու երաժշտության տեսաբանները հաճախ են քննադատում արդի հայ երաժշտներին, քանի որ նրանց ստեղծագործություններում բացահայտորեն զգացվում է, այսպես կոչված, արաբաթուրքական ազդեցությունը: Վերջինս, ի դեպ, այնքան ակնհայտ է, որ ոչ ոք, թերեւս, ի գործն է հերքելու դա: Փորձենք հասկանալ, թե ինչպես պատահեց, որ մեր ավանդապաշտ հայ ժողովուրդը հանկարծ ենթարկվեց թշնամի ժողովուրդների մշակութային ազդեցության: Եթե մեր հարեւան ազգերը թշնամաբար են տրամադրված եղել մեր հանդեպ, ապա ինչո՞ւ է վերջինս իր մշակույթի մեջ ներմուծել օտար մշակութային տարրեր, որոնք պարզապես աղճատում են մեր ազգային արվեստը: Կարծում ենք բացատրություն ակնհայտ է. որքան էլ մենք դարեր շարունակ հասկանալիքը, որ մեր հարեւան էթնոսներից շատերն անբարյացակամ են մեր հանդեպ, միեւնոյն է, երկար ժամանակաշրջան կողք կողքի ապրելը կամ թե ակամա հանգեցնում է մշակութային փոխազդեցու-

թյունների, որը, ինչպես արդեն մեկ անգամ արդեն ասվել է, կարող է լինել ինչպես դրական, այնպես էլ բացասական: Եթե խոսքը վերաբերում է արդի հայ երաժշտությանը, ապա ակնհայտ է, որ այդ ազդեցությունն ավելի շատ բացասական է: Ուստի անհրաժեշտ է աստիճանաբար ձեռք բերել այդ բացասական ազդեցություններից: Այս հարցում չափազանց կարեւոր է մեր հայ մտավորականների հետեւողական ու շարունակական քարոզչական եւ լուսավորչական աշխատանքը: Այս գործում նաեւ շատ մեծ անելիք ունի մեր պետական վերնախավը: Հստակեցնելով ասելիքը՝ նշենք, որ այստեղ խոսքը պետական ցենզուրայի մասին է, որի նախատիպը մենք ունենք տակավին խորհրդային ժամանակաշրջանում: Հիշենք, թե ինչպես էին մարդիկ խորհրդային տարիներին ընդվզում պետական ցենզուրայի դեմ՝ ասելով, որ դա սահմանափակում է մարդկանց ազատությունը, զրկում է նրանց ընտրության իրավունքից, ասել է թե՛ իր բնույթով բացասական երեւոյթ է: Սակայն ամեն բան այնքան միանշանակ չէ, որքան կարող է թվալ առաջին հայացքից: Վերցնենք, օրինակ, խորհրդային հայկական էստրադան եւ համեմատենք մերօրյա էստրադայի հետ: Հավանաբար ոչ մի ողջամիտ մարդ չի կարող զուգահեռ անց-

կացնել: Եկեք համաձայնեք, որ սովետահայ երաժշտական մշակույթն առնվազն մի քանի գլուխ բարձր էր մերօրյա հայ մշակույթից: Ծայրահեղությունների գիրկը չընկնելու համար նշենք, որ բնավ ոչ բոլոր արդի երաժշտներն են ցածրաճաշակ երաժշտություն ստեղծում ու հրամցնում հայ հանդիսատեսին: Ասենք ավելին՝ սովետական դարաշրջանի ոչ բոլոր երգահաններն ու երգիչներն էին կատարյալ: Այդ ժամանակներում եւս կային միջակայություններ: Սակայն դժվար չէ նկատել, որ մեր օրերում այդ միջակայությունների թիվը զգալիորեն աճել է: Մի կողմից այս ցավալի իրողության պատճառը պետական ցենզուրայի բացակայությունն է, մյուս կողմից՝ խնդիրը մարդկանց կոմերցիոն մտածելակերպի մեջ է: Տեստագիտության մաքուր գործում է մի պարզ եւ բոլորին մաքուր հայտնի սկզբունք. «պահանջարկը ծնում է առաջարկ»: Մեր կյանքը, թվում է, վերածվել է մի մեծ շուկայի: Ամեն բան մեր իրականության մեջ կարծես կարգավորվում է շուկայական օրենքներով: Բայց սա անհայտորեն այնքան էլ ճիշտ չէ: Ցանկացած ողջամիտ մարդ թերեւս կհաստի, որ հոգեւոր ուղիորդ՝ մասնավորապես մշակույթն ու գիտությունը, չի կարելի կառավարել կոմերցիոն օրենքներով:

Շարունակությունը՝ էջ 8

Սկիզբը՝ էջ 5


Նա հիշում է հայկական վերածնունդն ընդունողներին, տալիս Աբեղյանի, Չալոյանի, Մկրյանի անունները, առանց անուններ տալու, ակնարկում ժխտողներին եւ իր խնդրից դուրս համարում «...հայկական վերածնունդի գոյության հարցի պարզաբանումը», մինչդեռ դա հենց գրականագիտության պատմության հանգուցային հարցերից մեկն է, եթե ոչ ամենահանգուցայինը: Ամփռապես ավելացնում է. «Հայերի համար պետականության վերականգնումն ինքնին քաղաքական վերածնունդ էր» (էջ 71), բայց սա արդեն ուրիշ բան է:

Վերածնունդի գաղափարաբանության շրջանակներում խորհրդային գրականագիտությունը Նարեկացուն շատ է ենթարկել կամայական մեկնաբանությունների: Ինչպես ասացինք, նպատակը մեկն էր՝ Նարեկացուն փրկել... Նարեկացուց: «Փոքրիկ գլուխգործոցներ» վերլուծական շարքում Վահագն Դավթյանն անդրադարձել է «Մեղեդի ծննդյան» տաղին: Ըստ նրա՝ Նարեկացին «Մատյան...»-ի «...հատկապես մարդու փառաբանության հատվածում, հավանաբար տարբերակներ են ոչ գիտակցաբար, տուրք է տվել թոնդրակյան որոշ գաղափարների» (Վ. Դավթյան, Ի սկզբանե էր Բան..., Եր., «Խորհրդային գրող», 1989, էջ 202): Այնուհետեւ՝ տաղերի մեջ «...առկա են մեղավոր զգացմունքներ հարուցող նկարագրություններ ու պատկերներ» (նույն տեղը, էջ 202): «Երգ երգոց»-ի մեկնություն կապակցությամբ Նարեկացուն վերաբերում է աշխարհիկ «տոփական» զգայնու-

ՆԱՅԿԱԿԱՆ ՎԵՐԱԾՆՆՈՒՄ

(Ժամանակը եւ առանձնահատկությունները)

թյուններ, որոնք միայն իր՝ Նորոյա բանաստեղծի մտքով կանցնեին, բայց ոչ Նարեկացու: Իբր երիտասարդ տարիներին վանքի բակում Նարեկացին տեսել է մի զեղեցկուհու, նայել նրա աչքերի կապույտին, կիսաբաց օձիքի տակից ցուցացող թրթռուն կրծքին, գերվել, տարվել, նրա հանդեպ տածել «մեղսամած» զգացմունքներ եւ գրել «Աչքն ծով ի ծով ծիծաղախիտ...» եւ հետագա տողերը: Դավթյանը շարունակում է երեւակայության թռիչքը. «Ինչ իմանար երիտասարդ աբեղյան, որ դարեր հետո Ռաֆայել անունով մի ուրիշ հանճար, մի ուրիշ երկնքի տակ, հենց այդպես է նկարելու Աստվածամորը, այդ նույն գույնով, նույն լուսափայլ կրծքով» (նույն տեղը, էջ 207): Եվ, իբր, այդ տաղի բաց պատկերների պատճառով Նարեկացին ահ է ունեցել հավատաքննիչներից, թոնդրակեցի համարվելու մեղադրանքից ու ատյան կանչվելու սարսափից եւ տաղը վերնագրել «Մեղեդի ծննդյան», իսկ վերջում էլ ավելացրել «փրկարար» տողեր: «Զեզ պսակող թագավորին // Ու Նորածին այն փրկչին փառք // Հավիտյանս հավիտենից. Ամեն» (նույն տեղը, էջ 208): Եվ, իբր, մեղքի այդ գիտակցումն է դրդել «Մատյան...»-ում գրելու այս տողերը: «Ով դու անարժան անձ իմ հանցավոր, // Չարագործ, պոռնիկ, բազմաբծ



համակ // Ապականության անդու անդաստան»: Դավթյանը համոզված է, որ ամեն ինչ «մոտավորապես հենց այդպես էլ եղել է», եւ որ Նարեկացու միակ մեղքը սերն է: Վերածննդյան մտայնությամբ տոգորված այս մեկնաբանությունը, իհարկե, սուկ բանաստեղծական վառ երեւակայության արգասիք է՝ հեռու բնագրային հարազատությունից եւ պատմական ժամանակի յուրահատկությունից: Այսպես կարող է դատել 20-րդ դարի աշխարհիկ բանաստեղծը, բայց ոչ աստվածամերձ սրբակրոն վարդապետը:

Այսպես, հայ գրականագետների կարծիքով, Նարեկացին վերածննդի ներկայացուցիչ էր:

Անդրադառնալով եւս մեկ աշխատության (Պ. Խաչատրյան, Գրիգոր Նարեկացին եւ հայ միջնադարը, Էջմիածին, 1996): Ըստ ուսումնասիրողի՝ Մկրյանը թեեւ նկատելիորեն անտեսել է Նարեկացու ստեղծագործության կրոնական կողմը եւ ծայրահեղորեն բեւեռացրել աշխարհիկ միտումները՝ պայմանավորված ժամանակի «գաղափարական խեղդիչ մթնոլորտով <...>, այդուամենայնիվ, անհնար է ուրանալ այն դերը, որ ունեցավ Մկրյանի աշխատությունը հայկական վերածնունդի տեսության հետագա զարգացման գործում» (էջ 6):

Խաչատրյանն անդրադառնում է նաեւ վերածնունդի ժխտման տեսակետին՝ ավելացնելով, որ այդ «...ժխտումն արտահայտվել է հենց այնպես, «ոտի վրա», առանց գիտական լուրջ հետազոտության: Հակադրվել են, քանի որ մտովի նրա մեջ տեսել են եվրոպական Ռենեսանսի հետ նույնացման վտանգ, մի բան, որից զուլջացնում էր եւ ինքը՝ Աբեղյանը...» (էջ 6-7): Հաջորդում է Աբեղյանից քաղվածը՝ «... մեր հայկական վերածնունդն ինքնուրույն է», «առաջ էր եկել հարյուրամյա խաղաղության միջոցին», որին ավելի ամբողջական ընդգրկումով քիչ վերը անդրադարձել ենք նաեւ մենք եւ տվել համապատասխան բացատրություն: Ծարունակություն մեջ աս-

վում է, որ եվրոպական եւ հայկական «...վերածնունդի զարգացման միտումները միմյանց հետ ունեցել են շփման կետեր» եւ թվարկվում են գրքից գիրք անցած կրկնված մտքերը. «...մասնավորապես երկուսն էլ արդյունք են կյանքի եւ աշխարհայեցողության մեջ կատարված արմատական փոփոխությունների, մարդու նկատմամբ Նոր հայացքի ձեւավորման, մարդու կերպարը իբրեւ անհատականություն ըմբռնելու, բնության հետ նրա կապի հայտնաբերման ու սխալաստիկայի աստիճանական թթափման, որին մեզանում ինչոր չափով ուղեկցել է նաեւ եկեղեցական բարեպաշտության թուլացումը: Բայց հայկական վերածնունդը, հակառակ բարեհաջող սկզբի, հետագայում լիարժեք զարգացում չունեցավ, չհասավ իր օրինաչափ բարձրակետին» (էջ 7): Դրա պատճառ է համարում պետականության վերացումը, շարունակական պատերազմները եւ դրանցով պայմանավորված՝ մշակութային անկումը: Այդ դեպքում բոլոր հաղթող, կայացած պետությունները պետք է գտնվեն մշտական վերածնունդի մեջ: Բայց այդպես է արդյոք: Իհարկե, այդպես չէ, քանի որ Վերածնունդը՝ որպես մտավոր շարժում, միմիայն որոշակի գաղափարախոսության արտահայտություն է՝ բնորոշ միմիայն եվրոպական գրականությանը, այն էլ ոչ թե եվրոպական բոլոր երկրներին, այլ միայն մի քանիսին:

Շարունակելի
Հավիթ ԳԱՍՊՂՐՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր,
պրոֆեսոր



Սկիզբը՝ էջ 7

Յոգեւոր ուրորտը վեր է մնացած բոլոր բնագավառներից, եւ մեր կառավարող վերահասան ու հասարակությունը պետք է մեկընդմիջտ հասկանան այս ճշմարտությունն ու համապատասխան հետազոտություններ հենեն: Անշուշտ, միշտ էլ կարելի է ասել, որ սխալ է հասարակության լայն զանգվածներին պարտադրել բարձր մշակույթ այն դեպքում, եթե այդ զանգվածները սիրում են ցածրաճաշակ մշակույթը, սակայն պետության դերը հենց այն է, որ նա պետք է, թեկուզ եւ հարկադրական միջոցներով, հետզհետե բարձրացնի մարդկանց հոգեւոր-գաղափարական մակարդակը: Ի դեպ, խորհրդային տարիներին այս աշխատանքը կատարվում էր, եւ առկա էին որոշակի շոշափելի արդյունքներ: Սակայն անկախության քսանհինգ տարվա ընթացքում խորհրդային վերահասարակ կատարած այդ հիրավի հսկայածավալ աշխատանքի մեծ մասը պարզապէս ջուրն է ընկել, եւ այժմ մեզ բաժին են հասել խորհրդային մշակույթի փլատակները, որի վրա անշուշտ կառուցվել է նորը, որը, ցավոք, այնքան ներդաշնակ ու կատարյալ չէ, որքան հարկն է: Մշակութային վերելքներ ու վայրէջքներ տեղի են ունեցել մշտապէս՝ տարբեր պատմական ժամանակաշրջաններում, տարբեր երկրներում ու հասարակություններում մեջ: Ցանկացած պատմաքաղաքական

վայրիվերում, իսկ մեր ազգը դրա կենդանի վկան է, անխուսափելիորեն հանգեցնում է մշակույթի ու արվեստի անկման, իսկ ցանկացած անկմանը հաջորդում է վերելքը, սակայն հարցն այն է, թե երբ է տեղի ունենալու այդ վերելքը: Այս հարցին ճշգրիտ կերպով չեն կարող պատասխանել նույնիսկ ամենահեռատես ու ամենահիմաստուն մտավորականները: Ինչպէս ասում են, «ժամանակն ամեն ինչ կդիւ իր ճիշտ տեղը»: Իսկ մինչ այդ մենք կունենանք այն պատկերը մշակույթի ուրորտում, որ ունենք ներկայումս:

Իսկ այժմ խոսենք մեկ այլ կարեւոր խնդրի՝ մարդու հոգեկան աշխարհի վրա մշակույթի ազդեցության մասին: Ակնհայտ է, որ մշակույթը կարող է երկակի՝ դրական եւ բացասական ազդեցություն ունենալ մարդու հոգեկան վիճակի վրա: Ոմանց մտքում կարող է հարց առաջանալ. ինչպէ՞ս կարող է մշակույթը բացասաբար ազդել մարդ արածի վրա: Թվում է, թե մշակութային ուրորտը կարող է մարդկանց վրա միմիայն դրական իմաստով ազդել: Անշուշտ, բարձր մշակույթը միանշանակ լավ ազդեցություն է թողնում մարդու հոգեկանի վրա: Բարձր մշակույթ ասելով՝ պետք է հասկանալ դասական երաժշտությունը, օպերային արվեստը, ֆիլիարմոնիկ երաժշտությունը, բալետը, թատրոնը, գեղարվեստական գրականությունը, կերպարվեստը եւ ինչու ոչ՝ էստրադային արվեստը,

Մշակութային աշխարհը եւ դրա ազդեցությունը մարդու հոգեբանական վիճակի վրա

տը, եթե այն մշակված է ու ներդաշնակ: Ինչ վերաբերում է մշակույթի բացասական ազդեցությանը, ապա այս առնչությամբ հարկ է ասել հետեւյալը. ցածր մշակույթը ոչ միայն աղճատում է մարդկանց ճաշակը եւ սխալ գեղագիտական ընկալումներ ձեւավորում, այլեւ ուղղակիորեն ներազդում է մարդու հոգեֆիզիկականի վրա: Վերցնենք, օրինակ, ծանր ռոքը, որը, ի դեպ, բավականին մեծ ժողովրդականություն է վայելում հատկապէս երիտասարդության շրջանում: Այդ երաժշտությանը ծանոթ յուրաքանչյուր մարդ հավանաբար կփաստի, որ այն չափազանց աղմկոտ է, ծանր, ուստի եւ չի կարող ամոքիչ ազդեցություն ունենալ մարդկանց վրա: «Ամոքիչ» բառը մենք այստեղ կիրառեցինք բնավ ոչ պատահականորեն: Բանն այն է, որ մեր կյանքը լի է սթրեսային իրավիճակներով: Սթրեսները մեր օրերում այնքան շատ են, որ մարդիկ հաճախ կորցնում են հոգեկան հավասարակշռությունը եւ դառնում ոչ աղեկվատ: Հազարավոր մարդիկ տարիներով տառապում են խորհիկական ընկճախտից, իսկ այդ մարդկանց մի մասը ինքնասպանություն է գործում կամ առնվազն հաճախակի մտածում է կյանքի անիմաստության մասին: Նշված իրավիճակներում օգնության է հասնում մշակութային կյանքը, մասնավորապէս երաժշտական արվեստը: Բանն այն է, որ երաժշտությունը պարունակում է որոշակի ռիթմեր, որոնք կարող են դրականորեն ազդել մարդու ուղեղի վրա: Մարդկային ուղեղի ռիթմերը կարող են լինել դրական կամ բացասական: Սթրեսային եւ ընկճախտային իրավիճակներում այդ ռիթմերը միանշանակորեն բացասական են, սակայն դրանք կարող են շտկվել ճիշտ ընտրված

երաժշտության միջոցով, որն առավել համահունչ կլինի տվյալ անձնավորության ճաշակին, նախասիրություններին եւ նրա հոգեվիճակին: Մարդու հոգեբանական վիճակի վրա բարեբեր ազդեցություն կարող է ունենալ նաեւ կերպարվեստը, մասնավորապէս նկարչությունը: Այստեղ չափազանց կարեւոր է պատկերի գունապակը: Ակնհայտ է, որ երբ մարդը գտնվում է լարված նյարդահուզական վիճակում, ցանկալի է դիտել այնպիսի նկարներ, որոնց գունային երազավորումներն ավելի մեղմ են կամ սառը: Իսկ ընկճախտային իրավիճակներում թերեւս առավել նպատակահարմար է դիտել այնպիսի կտավներ, որոնց գույներն առավել աշխույժ են, ջերմ ու բազմազան: Վերջին խմբին պատկանող նկարչական գործերն առավել նպատակահարմար է դիտել ուշ աշնանային եւ ձմեռային շրջաններում, երբ մարդիկ ավելի հաճախ են ենթակա ընկճախտային վիճակների: Մարդու հոգեֆիզիկական վիճակի վրա դրականորեն կարող է ազդել նաեւ պարզավոր տարբեր ժանրերով: Հոգեթերապեւտների պնդմամբ՝ երբ մարդը գտնվում է լարված նյարդահուզական, սթրեսային կամ ընկճախտային վիճակների մեջ, ապա նա պետք է շարժումներ կատարելու միջոցով կամ այլ կերպ ասած՝ մկանային համակարգի միջոցով ձեռքագատվի գերլարված վիճակից: Այս հարցում, անշուշտ, կարող է օգնել ֆիզիկական աշխատանքը, սպորտը եւ ինչու ոչ՝ պարը: Չէ՞ որ վերջինս էլ ֆիզիկական գործունեությունն տարատեսակ է: Ասենք ավելին՝ ապարավեստը կարող է առավել դրական ու արդյունավետ ազդեցություն ունենալ նյարդային գերլարված վիճակում գտնվող անձի վրա, քան

պարզ ֆիզիկական աշխատանքը կամ սպորտը, որոնք գուտ մեխանիկական բնույթ են կրում եւ ոչ՝ հոգեւոր ու գեղագիտական: Պարի յուրահատկությունը հենց այն է, որ դա իր մեջ համադրում է ֆիզիկականը, հոգեւորը եւ գեղագիտականը: Ուշագրավ է, որ դարեր առաջ հայերն ունեցել են մի հետաքրքիր բուժական ավանդույթ. հոգեկան հիվանդներին հարկադրում էին երկար ժամանակ պարել՝ այսպիսով նրանց հանելով հոգեֆիզիկական լարված վիճակներից: Ի դեպ, եթե խոսեցինք հոգեկան հիվանդությունների ու արվեստի մասին, ապա նշենք, որ այժմ հոգեբուժության մեջ գործում է մի առանձին բուժական ուղղություն, որը կոչվում է «արթերապիա»՝ բուժում արվեստի միջոցով: Խոսքը մասնավորապէս գեղանկարչության, գրաֆիկայի եւ քանդակի մասին է: Օրինակ՝ հոգեկան հիվանդներին հանձնարարում են իրենց պատկերել քանդակի տեսքով: Այս մեթոդը որոշակի ամոքիչ ազդեցություն է թողնում նման մարդկանց վրա: Ամփոփելով ասելիքը՝ կարող ենք արձանագրել, որ արվեստը՝ իր զանազան տարատեսակներով, ունի ոչ միայն գեղագիտական կարեւորություն, այլեւ զգալի բուժական ազդեցություն, ընդ որում՝ այն ներազդում է ոչ միայն անձի հոգեկան, այլեւ ֆիզիոլոգիական վիճակի վրա: Գաղտնիք չէ, որ մարդ արարածի հոգեֆիզիկական աշխարհները սերտորեն փոխկապակցված են, եւ առաջինի խաթարումն անխուսափելիորեն հանգեցնելու է երկրորդի խաթարման: Իսկ արվեստի դերն այս խաթարումների շտկման հարցում թերեւս անզանահատելի է:

Տիգրան ՍՄՈՒՆՅԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

ՉՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԿԵՐՊԱՐԸ ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՎ ՀԱՄԱԾԵՆԱԿՐՀԱՅԻՆ ...

Սկիզբը՝ էջ 6

Նա սերտ կապեր էր հաստատել մակեդոնական ազատագրական շարժման գործիչներ Գարվանովի եւ Սարաֆովի հետ: Երբ 1912 թ. աշնանը բռնկվեց Բալկանյան առաջին պատերազմը, հայ եւ բուլղար բախտակից ժողովուրդները դարձան նաեւ զինակիցներ: Անդրանիկը եւ Գարեգին Նժդեհը միասին ու համախորհուրդ առաջնորդում են հայկական կամավորական վաշտը բալկանյան ռազմադաշտերում: Բուլղար ժողովրդի հիշողության մեջ առհավետ կապրեն հայ կամավորականների քաջարի պահիվածքն ու կատարած սխրագործությունները: Այդ օրերին բուլշեւիկյան կուսակցության գործիչ, լրագրող, հրապարակախոս Լեւ Տրոցկին «Անդրանիկը եւ իր ջոկատը» հոդվածում այսպէս է նկարագրել հայ զորավարին. «Նա փառահեղ է իր մուգ մոխրագույն հագուստով, կողքից կախ է ընկած հեռադիտակ եւ բրաունինգ ատրճանակ, կրծքին ամրացրած է մի փունջ ծաղիկ եւ ժապավեն՝ «Մահ կամ



ազատություն» մակագրությամբ» (տե՛ս «Հորիզոն», 3 օգոստոսի, 1913 թ.): Բալկանյան պատերազմում ցուցաբերած քաջության եւ անձնագիտության համար Անդրանիկն արժանացավ ոչ միայն կոչումների եւ շքանշանների, այլեւ «Բալկանյան արծիվ» ժողովրդական տիտղոսին: Երախտապարտ բուլղար ժողովուրդն իր մայրաքաղաքում

հավերժացրել է Անդրանիկի եւ Նժդեհի անունները: Անդրանիկի տեղը ժողովրդական մեծ հերոսների այն փաղանգում է, որը բոցկտում է հավերժության լուսապսակով: Անդրանիկի ձեռակերտ հուշարձանները սփռված են աշխարհով մեկ, սակայն նրա անձեռակերտ մնայուն հուշարձանը կերտված է ժողովրդի հոգում՝ ա-

րարված պատմության եւ ժամանակների կողմից: Այնքանով, որքանով Անդրանիկի ցատումն ու կռիվը ուղղված էին բոլոր տեսակի եւ բոլոր կարգի բռնակալների ու բռնակալությունների դեմ, ուրեմն այդքանով նա ոչ միայն հայության, այլեւ բոլոր՝ մանավանդ ճնշված ու հալածված ժողովուրդների սիրելին է, հարազատ գավակն ու անխորտակելի հերոսը: Արդարամիտ է նշել, որ Չորավարը հերոսացավ դեռեւս իր կենդանության օրոք: Նրա մեծ ժողովրդականությունն առաջ եկավ երեսնամյա՝ անընդհատ ու անընդմեջ պայքարի բովում, որտեղ ի ցույց եղան աներեր հերոսական կամքի եւ մարդկային վեհ ու անձնագիտական բնավորության ու հոգեկերտվածքի գծերը: Հիրավի, շատ դիպուկ բնութագրում է տվել անվանի գրող Ավետիս Ահարոնյանը. «Անդրանիկը հայ ժողովրդի համար անհատ չէ, այլ մարմնացումն է մի հզոր ու անսասան գաղափարի: Եվ իբրեւ այդպիսին՝ նա ժողովրդի երեւակայության մեջ առանձնացած, դյուցազնացած է: Կուռք է Անդրանիկը, որ մեր ժողովուրդն է կռել, կոփել ու քանդակել համապատասխան իր դարավոր իղձերի, ձգտումների, ամբողջ իր իդեալին, արդարության եւ իրավունքի ծարավ իր հոգու պահանջներին» (Ավ. Ահարո-

նյան, Երկ. ժող., Բոստոն, 1984 թ., հատոր 5, էջ 386):
Անկասկած է, որ Չորավար Անդրանիկի անունը հավերժորեն հուղվելու է այն մարդկանց շուրթերին, ովքեր ծարավ են ազատության եւ արդարության, ովքեր երազում, պայքարում եւ մարտնչում են ժողովուրդների եւ համայն մարդկության հուսադրող ապագայի համար:
Արմեն ԿՐՄՊԵՏՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՅԱՅՄԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկաթաթաթերթ

Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան»
թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝
Աստղիկ Ստամբոլյան

Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ. փոստ՝ gristhay@etchmiadzin.am
astghikstam@gmail.com

web կայք՝
krishayas.wordpress.com
Ստոր. տպագր. 17.2.2017թ.

Տպաքանակը՝ 2100
Գինը՝ 50 դրամ